

ՊՐՈՓ. Ն. ԿԱՐԵԵՒ

ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ, ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԵՒ

# ԱՆՁՆԱՀՈՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ




Թարգմ. ռուսերենից  
ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Խմբագրութեամբ  
Ա. ՏԻԳՐԱՆ ԵԱՆԻ



Վաղարշապատ  
Տպարան Մայր Արքունի Ս. Էջմիածնի  
1910



4-31

ամ ՊՈ-Փ Ն. ԿԱՐԵԵՒ

ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ, ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԵՒ

# ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷԶ



1004  
1003  
1002  
1001  
1000

Թարգմ. ռուսերենից  
ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ - թյ.



Խմբագրութեամբ  
Ա. ՏԻԳՐԱՆ ԵԱՆԻ



Վաղարշապատ

Տպարան Մայր Արքուոյ Ա. Էջմիածնի

1910

ԴԱՎԻԹԵՐԻ, ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԵՐԻ ԵԽ ԸՆՉԵԼՈՒԹԵԵՆ  
ՔԵՐ ՊԵՏՄՈՒԹԵԸՆ ՄԷջ<sup>4)</sup>

(Պատմութիւն, Լվոլիցիայ եւ առաջադիմութիւն)

Պատմութեան ընթացքը քաղաքակրթութեան և հաս-  
տակական ձեւքի մի էվոլյուցիա է, որը իրականանում է  
միայն մարդկային գործունէութեան միջոցով; Պատմութիւնը  
գործունէութիւն է. նրա ընթացքը մարդկային գործառնու-  
թիւններից է կազմում: Ուր որ անհատները զարգացման  
միենոյն աստիճանի վրայ կանգնած մնալով՝ միենոյն գոր-  
ծառնութիւններն են կրկնում, ուր որ դրանց հասարակա-  
կան կազմակերպութիւնը, այսինքն միենոյն յարաբերու-  
թիւնների կրկնութիւնը, չի փոփոխում, ուր որ մարդու  
գաղափարները, որոնք ազգում են նրա գործառնութիւն-  
ների վրայ, նախկինն են մնում, այնտեղ, ինչպէս որ անա-  
ռունների և վայրինիների մէջ է, չկայ պատմութիւն: Պատ-  
մութիւնը միայն այն ժամանակ է սկսում, երբ անհատ-  
միաւորը գործառնութիւնների սիսթէմում (համակարգու-  
թիւն) մի նոր, անսովոր բան է մէջ բերում, նորաստելով  
քաղաքակրթութեան փոփոխման, երբ նոր յարաբերութիւնների ծագման շնորհիւ բարդանում է հասարակական կազ-

4) Թարգմանւած է „Роль идей, учреждений и личности въ исторіи“ գրքից, որը հեղինակի կազմած մի համառութիւն է իւր իսկ մեծ երկի՝ „Основные вопросы философии истории“, տատոր երկրորդ գիրը 4-րդ գլուխ 4.

մակերպութիւնը, երբ նոր գործառնութիւնների շարժառիթ դարձող գաղափարներ են երևան գալիս: Այս է պատմութեան սկզբը և սկզբունքը: Անձնաւորութիւնը կեանքում մի նոր բան կարող է մէջ բերել կամ հասարակական կազմակերպութեան մէջ ունեցած իւր առանձնայառուկ դիրքի և կամ իւր գաղափարների շնորհիւ, այսինքն այսպէս թէ այսպէս առաջ գալով և զատուելով բարձութիւնից, մասայից: Մի անձնաւորութեան միւսից մեծ չափով աարբերութիւն հասարակական կազմակերպութեան մէջ հնարաւոր է միայն վերջինիս բարդութեան և ընդարձակութեան դէպքում: Հէնց իրենք նոր գաղափարները առաջ են գալիս միայն անհատների ձևուներէցութեամբ և ամենից շատ աչքի ընկնող արդինք են տալիս միայն ընդարձակ հասարակական<sup>9</sup> կազմակերպութիւններում: Ուստի և պատմութեան ընթացքը ծնունդ է առնում պետութեան կարող են հանդէս գալ՝ աշխարհիս մարդիկ, որոնք նոր գաղափարների լայն գործադրաւթիւն տան: յեղական կենցաղի մէջ անհատը միայն իւր նախնիքների գործառնութիւններն է կրկնում և ընդարձակ ասպարէզ չունի իր գաղափարի կիրառութեան համար: Եւ յիրաւի, պատմութեան սկզբում միշտ պետութեան և կրօնի հիմնադրի և հիմնադիրների ենք տեսնում, — պետութեան՝ որպէս աւելի լայն հասարակական մի կազմակերպութեան, և կրօնի՝ որպէս նախնիքն իրականութեանը հակասող գաղափարների մի համակարգութեան: Հասարակական գործիչ, պետութիւն և կրօն, ականաւոր անձնաւորութիւն, լայն կազմակերպութիւն, որոշ ձևակերպութեան ամբողջ կազմական կամքական պատմական կամքական պատմականից, ուր էական փոփոխութիւնները տեղի են ունենում միայն օրգանական էվոլյուցիայով անզարդացած քաղաքակրթութեան տէր փոքր միութիւններում: Այդ կենցաղը է և ոչ թէ պատմութիւն: Եւ պատմութեան ամբողջ էվոլյուցիան դէպէի այն կողմն է գնում, որպէս զի հնարաւոր գարձնէ անհատական ձևուներէցութեան գարգացումը, ընդզբէ

հասարակական փոխազգեցութիւնների սիսթէմի մէջ ամբողջ մարդկութիւնը և կեանքում նոր գաղափարներ, իդէալների աստիճանական էվոլյուցիան իրականացնէ: Ուրիշ խօսքով, ահա թէ երբ է սկսում պատմութիւնը: Երբ մի կողմից, ինչ պատճառների շնորհիւ էլ լինի, հասարակութեան մէջ զարգանում է անհատական ձեռներէցութիւնը և նրա վրայ հիմնուած գործունէութիւնը՝ միմեանց յաջորդող սերունդների հաւաքական և անզիտակից գործունէութեան նախորդ պատմութեան շնորհիւ կատարւած գաղափարների և հաստատութիւնների բաւարար զարգացմամբ: Անհատական ձեռներէցութեան մասին խօսքը յետոյ է լինելու, իսկ այժմ կանգ առնենք գաղափարների և հաստատութիւնների նշանակութեան վրայ պատմութեան մէջ:

Գաղափարների նշանակութիւնը պատմութեան մէջ իդէալների, այսինքն գործառնութիւնները պատճառաբանող գործօններից մէկի՝ նշանակութիւնն է կեանքի մէջ: Քանի որ իրականութիւնը իւր զարգացման մէջ մի գուտ տրամարանական ընթացք չէ հանդիսանում, ապա մարդկային իդէալների յաջորդական ընթացքն էլ տրամարանական օրէնքի համեմատ չէ կատարում, այլ իրական կեանքում այլ և այլ փոփոխութիւններ առաջացնող զանազան պատճառներից կախում ունի: Մենք համաձայն ենք, որ գաղափարները զեկավարում են պատմութեան ընթացքը, բայց հէնց այն գաղափարները, որոնք ամենից շատ նրա վրայ աղեցնութիւն են գործում, իրենք կախում ունին այդ ընթացքից: Զուտ վերացական գաղափարները, օրինակ մատեմատիկական ճշմարտութիւնները, ժողովրդների ճակատագրի վրայ անմիջական աղեցնութիւն չեն ունենում, բայց իրենք էլ անմիջապէս կախում չունեն այդ ճակատագրից: Ուրիշ բան է պարտականութեան գաղափարները (պարտարանական). սրանք պատճառաբանում են մարդու գործառնութիւնները, բայց միևնույն ժամանակ հէնց իրենք որոշ վայրկանի, որոշ հանգամանքների, հասարակութեան որոշ վիճակի արգասիք են: Ուրիշ խօսքով՝ ոչ ամեն գաղափար զեկավարում է պատմութիւնը, ինչպէս և միայն գաղափարներով չէ որ

դեկապրւում է նրա ընթացքը: Ահաւասիկ գաղափարները դեկավարում են պատմութիւնը բանաձեռ անհրաժեշտ ուղղումը: Այս բանը յաճախ մոռանում են, իսկ դրանից ծագում է միակողմանիութիւններ, չափազմնցութիւններ, թիւրիմացութիւններ, վէճեր և ասարկութիւններ, որոնք այս բանաձեռ կիրառութիւնից և քննադատութիւնից են առաջ գալիս<sup>1)</sup>: Միւս կողմից՝ բոլոր հասարակական յարաքերութիւնները վերջի վերջոյ յենուում են գաղափարների որոշ սիսթէմի, որոշ սկզբունքների վերայ. ուստի հաստատութիւններն ուսումնամիբելիս անհրաժեշտ է ուշադրութեան առնել նրանց հիմքը կազմող գաղափարները: Այս տեղից է այն համոզումը, որ հասարակական վերակազմութեան համար անհրաժեշտ է ամենից առաջ հասարակութեան մէջ եղած գաղափարների փոփոխութիւնը. թէպէտ և միւս կողմից՝ գաղափարների փոփոխումը՝ անկարելի է հասարակական կազմակերպութեան անփոփոխութեան դէպքում: Այսպիսով կեանքը և գաղափարները մշանջենական փոխազդեցութեան մէջ են գտնուում. գաղափարները կեանք են ստեղծում, կեանքը գաղափարներ է ծնում, առանց գաղափարների փոփոխման չկայ փոփոխութիւն կեանքի մէջ, առանց կեանքի փոփոխութեան չկայ գաղափարների փոփոխութիւն. մի գաղափար տեղի է տալիս միւսին կեանքի ազդեցութեան տակ, կեանքի հին ձեւ փոխում է նորով գաղափարների մտսնակցութեամբ: Գաղափարների փոփոխութիւնը պատմութեան սուբյեկտու կողմնէ, կեանքի ձեւերի փոփոխութիւնը—օրյեկտու կողմը: Սուբյեկտի կողմը ճանաչելով եղանակացնում ենք օրյեկտի կողմի մա-

1) Տես „Цивилизација и дикія племена“, § 3: գաղափարները պատմութեան մէջ (Отеч. зап. հատոր CLXXXIV, երես 149 սկ.): Lazarus. Ueber die Ideen in der Geschichte (Zeitschr. für Völkerpsychologie III, 583—486). Կարեւոր խորհրդածութիւններ զտնում ենք Bagehot-ի մօտ. նրա Lois scientifiques du développement des nations (L'âge de discussion, 172 սկ.): չորրորդ զրում.

սին և ընդհակառակը: Գաղափարը պատմութեան և գործ ծօնն է և արգասիքը:

Պատմութեան մէջ կարող ենք երեան հանել երկու տեսակի գարաջան՝ օրգանական և քննադատական<sup>1)</sup>: Առաջններն են, երբ գոյութիւն ունեն ամբողջ հասարակական կեանքի հիմքը կազմող հանրաճանաչ գաղափարներ: Երկրորդ տեսակի գարաջաններն են, երբ այդ հիմունքների քննադատութիւնը և նորերի որոնումն են տեղի ունենում: Հասկանալի բան է, որ առաջխաղացութիւնը կատարուում է քննադատական գարաջանների օգնութեամբ, երբ հստաբակութիւնը հասունանալով անցնում է հանրաճանաչ իդէալները: Իսկապէս ասած, ամբողջ պատմութիւնը հէնց քննադատական գարաջանների մի շարք է: զուտ օրգանական շրջան գտնում ենք միմիայն վայրենիների և այն ազգերի կեանքում, որոնք կենցաղի որոշ ձեւերի վրայ կանգ առել մնացել են: Եղած վիճակը (stateum quo-ni) իրի անփոփոխիս բան չընդունող ու իրականութիւնը բարեկոփել ձգտող ազգերի համար իդէալը առաջխաղացութեան մի ուղեցոյց ասող է. մինչդեռ՝ ուրիշ կեանքի հնարաւորութեան մասին գաղափար չունեցող, իրենցներկան այսպէս անած յաւերժացնող ազգերի համար նոյն իրականութիւնն է իդէալ, կամ աւելի ճիշտ՝ իրեն իդէալ է հանդիսանում մի կապանք, որը շպայլապում է նրանց մշտնշենական միեւնույնին: Անա թէ ինչու մարդկութեան գոյութեան ժամանակը նախապատմականի և պատմականի ենք բաժանում, իսկ ազգերը—պատմական և ոչպատմական ազգերի: Պատմութիւնը իդէալների

1) Այս տարրերութիւնը առ աջին անգամ մեւ ակերպեց Ա. Սիմոնը եւ մանաւանդ գարցացրեց նրա աշակերտ Բագրայ: Doctrine saint-simonienne P. 1830 (2-րդ հրատ.) երես 79 սկ. 93. 408, 457 սկ. 461 սկ. Cf. Ferraz. Étude sur la philosophie en France en XIX s., 34 սկ. Այդ ընդունեցին նաեւ Comte, Ferron (Théorie du progrès, I, 292 սկ. 310 սկ. 472 սկ. II, 434 սկ.) եւ ուրիշներ: Մեր այս տեսութիւնը մի փոքր այլ կերպ ենք գործադրում:

յաջորդական փոփոխութիւն է, մի ժողովուրդ երբ առաջին  
անգամ կեանքից նոր պահանջներ է անում, նա իւր գո-  
յութեան պատմական շրջանի մէջ է ուաք դնում և պատ-  
մական ժողովուրդ է դառնում: Երկրադնդի բոլոր ցեղերը  
դուրս են եկել միենոյն վիճակից, գաղափարների և կեանքի  
ձևերի նոյնանման կացութիւնից, և պատմութեան փիլիսո-  
փայութիւնը պիտի այդ վիճակը նկարագրէ իրեւ ամբողջ  
կատարւած առաջադիմութեան (պոսովէսի) ելակէտ, որ-  
պէսզի ապա հետամտէ մարդկութեան այն մասերի փոփոխ-  
ւող վիճակին, որոնք նախնական դրութեան մէջ չեն մնա-  
ցել: Այսեղ դարձեալ երկու խումբ ազգերի հնք հանդի-  
պում. ումանք կանգ են առել համեմատաբար ցածր աստի-  
ճանի կենցաղի վրայ, միւսները շատ առաջ են գնացել.  
առաջինները վայրենի ժողովուրդներն են, երկրորդները՝ քա-  
ղաքակրթւածները<sup>1</sup>): Այս պատճառով պատմութեան փի-  
լիսոփայութեան առարկան գլխաւորապէս քաղաքակիրթ-  
ժողովուրդներն են դառնում, որոնց պատկանում է ապա-  
գան և որոնց շնորհիւ միայն այժմ կարող են առաջ դնալ  
երկրագնդի յետամեաց ցեղերր:

ի՞նչն է պատմական ազգերը մարդկութեան մնացած բազմութիւնից զատում, առաջ քաշում։ Հէսց այն, որ նրանք իդէալներով են ալլում, իրականութեան մէջ ընդհանրա-

4) Սակայն այս տերմինները միայն խօսակցական լինդի մէջ կարող են գործածել, բայց զուտ գիտական շարադրութեան մէջ անյարմար են: Քաղաքակրթութիւն (ցիւլիդացիայ) են կոչում արդի Եւրոպայի կենանքի կազմակերպութեանը նմանող զարգացումը (կուլտուրան): իսկ բարբարոսութիւն — ուազմական-աւազակարարոյ նպատակների տէր հասարակութիւնը: վայրենութեան համար բացասական յատկութիւններ են մնում՝ իրեն ոչ բաղաքակիրթ, ոչ էլ բարբարոս տեսակին պատկանող մի հասարակութիւն: Առհասարակ այսպիսի բաժանումը խիստ զժւար է: „Պավլուզացիա և ճիկիա ու լուսաւորութիւններ են այսպէս յիշեալ յօդաածի հեղինակը հնարաւոր է զատում այդ տերմինների գործածելը. § 20, եր. 122,

պէս գոյութիւն ունեցող մարդուց և հասարակութիւնից աւելի լաւը պատկերացնելով։ Այն գաղափարները, որոնց վրայ յենուում է նրանց հասարակական կենցաղը և որոնց ցով զեկավարուում է նրանց մասնաւոր կեանքը, փոփոխուում են։ Տւեալ իրականութիւնից դժգոննելը, այն փոխել ձգտելը—ահաւասիկ պատմութեան շարժիչ ոյժը։ Վայրենին ոչինչ չգիտէ իւր անցեալի մասին, չի իմանում որ իւր նախորդը զարգացման աւելի ստոր աստիճանի վրայ է եղել։ Նրա կեանքը իրեն յաւիտեանս յաւիտենից միենոյն ձեւերի մէջ է պատկերանում։ Պատմական կեանքով ապրել սկսած մարդը արդէն գիտակցում է, որ ինքը քաղաքակրթւել է։ Նա կարիք է զգում մի առասպելի բարերար Աստւածութեան մասին, որը սովորեցրել է իրան կուլտուրական կեանքի տարրական հիմունքները։ Նա կարիք է զգում որևէ զրոյցի, թէ ինչ-պէս աւելի կրթւած երկրներից եկած գաղթականներ իրենց հետ քաղաքակրթութեան սաղմեր են բերել։ այստեղ է առաջին անգամ ծնունդ առնում առաջարկմութեան (պողորդէսի) գաղափարը, և շրջապատող իրականութիւնից ինչ որ աւելի կատարեալի մասին հասկացողութիւն ծագում։ Ի՞նչ փոյթ, որ մարդ սկզբում ենթադրում է, թէ «ոսկէ գարը» անցեալում է եղել, որ նա իդէալականացնում է հոռաւոր, իրեն անծանօթ և յաճախ միայն իւր երկակայութեան մէջ գոյութիւն ունեցող ժողովուրդների կենցաղը,—կարեւոն այն է, որ նա իդէալական կեանքի մասին պատկերացում ունի, որովհետեւ այստեղ են իրականութեանը քննադատաօրէն վերաբերւելու սաղմերը։

Ելքը պատմութեան այս կողմն ևսք ուսումնասիրում, ակամայ համեմատում ենք մեր նախորդ սերունդների գաղափարները մեր գաղափարների հետ, և այսպիսով սկսում ենք զնահատել նրանց: Վերցնենք, օրինակ, դասական (անտիկ) պետութեան գաղափարը, վերլուծենք իր բաղադրիչների, և կաենանք որ հնումը պետութիւնը հասկացել են որպէս բաղաբացիների մի փաքքիկ համայնք, որոնք կլանւած են եղել այդ ամբողջութեան կողմից և ապրել են ստրուկների աշխատանքով. իսկ այդ հակասում է պետութեան գաղափարը մեր գաղափարի հետ առանձին համապատասխանութեան մեջ:

թեան մասին մեր ունեցած հասկացողութեանը, մի այնպիսի պետութեան, որի մէջ քաղաքական համերաշխութեան սկզբունքը տարածում է ամրող ազգի կամ մի ամրող տերիտորիայի ազգաբնակութեան վրայ; աւելի տեղ է աըլուում անհատական կեանքի ինքնակախութեանը և երկրի բոլոր բնակիչների համար հաւասար իրաւունք է ճանաչում: Այս պատճառով մենք ասում ենք, որ պետութեան մեր իդէալը բարձր է դասականից (անտիկ), որ պետութեան մեր սահմանումը աւելի է համապատասխանում նրա իդէալական նպատակին, քան ինչ որ գոտնում ենք ճին աշխարհի մտածողների մօմ: Միենոյն ժամանակ ճին յոյն էլ իրաւունք ունէր նման եղբակացութեան գալու իւր պետութիւնը (պոլիտէյան) բարբարոսների պետութիւնների հետ համեմատելիս, որոնք իրեն անյայա էին. վերջինների ճիմքը կազմում էր ոչ թէ քաղաքացիների քաղաքական, հանրային համերաշխութիւնը, որը արտայայտում էր ու չեւցա. ՅԵ  
Հանաւոր. «*L'état c'est moi*» („պետութիւն ևս իմ“) բանաձևի: Արենելի ճին պետութիւններում աւելի ևս պակաս չափով էր ճանաչւած անհատական ինքնակախութիւնը, աւելի ևս մեծ էր մարդկանց անհաւասարութիւնը, որ օրինակ որբազործւած էր կաստաների աստւածային ծագման վարդապետութեամբ: Սրենելիան բոնապետութիւններից իւրաքանչիւրը իւր կողմից կարող էր նմանապէս իրեն վայրենիների հասարակութիւնից բարձր համարել, որովհետեւ յամենայն դէպահանական կեանքի որոշ նորմանը և որոշ մերժումը էր կարգաւորում էր հանդիսանում, փոխանակ կատարեալ անիշխանութեան և կուի բոլորի ընդդէմ բոլորի, որ տիրում է մի կատարեալ վայրենի վիճակի մէջ: Մեկ համար, ի հարկէ, գասական իդէալը անկատար է թւում, որովհետեւ մենք սկսում ենք իրակործել մեր պատճենական մէջ պետութեան մի այնպիսի գաղափար, որի մտախն Յունաստանի և Հոռվիմի մտածողները հասկացողութիւն անգամ չունէին, բայց կար ժամանակ, և մեղանից շատ հեռու չէ այդ ժամանակը (գասական) աշխարհի համար:

պետութիւնները անհասանելի իդէալ էին թւում. սակայն այդ էջնց այն ժամանակն էր, երբ հասարակական կաղմակերպութեան ճիմքը կազմող գաղափարները քիչ բանով էին տարբերում արևելեան բոնապետութեան սկզբունքներից: Բայց և այնպէս արդէն այն ժամանակ էլ կային մարդկե, որոնք պարզ հասկանում էին անտիկ պետութեան այն թուլ կողմերը, որ վրիպել էին առաջնակարգ կասիկ մտածող ների հայեցքից. Պլատոնը և Արիստոտելը պարտիկուլարիզմի, անհատի պետութեան մերժմանը էլ կամուկու, սարկութեան գոյութեան կողմնակից էին: Բնութեան մէջ իրի էութիւնը չի փոփոխութեան մէջ իրի հէնց էութեան փոփոխութիւնն ենք տեսնում, այն է նրա սկզբունքային կողմի փոփոխութիւնը: Օրինակի համար, օրգանիզմի էութիւնը օրգանական (գործարանաւոր) կեանքի բոլոր աստիճաններում միենայն է. օրյեկտիւ կերպով պետութեան էութիւնը Արևելքում, կլասիկ ազգերի մէջ, նոր ժամանակում—տարբեր է: Եթէ Արևելքում քաղաքական տրակտատներ գրելիս լինէին գիտութեան բոլոր կանոնների համաձայն՝ ապա պետութեան արևելիուն սահմանումին չէին համապատասխանելու յունական պուլսեաները, իտալական քիւտատեաները, իտալական քիւտատեաները և Սրբառութելի Պոլիտիալի («քաղաքավարութեան») սկզբունքներով չի կարելի բացատրել մեր նոր պետութիւնը: Ամբողջ բանն այն է այստեղ, որ իւրաքանչիւր պատճենական երեսյթի մէջ սուրբիկաթիւ կողմ կայ. պետութիւնը ոչ միայն երեսյթ է, այլ և այդ երեսյթը հասկանալու մի որոշ հիմնակ, ոչ միայն ուլ Նատիրուատ, մի բնական արդիւնք, այլև որոշ իդէալի մարմարացումն, կիրարկումն, ոչ միայն այն, ինչ որ գոյութիւն ունի, այլև այն, ինչ որ պիտի գոյութիւն ունենայ այս կամ այն մարդկանց կարծիքըով: Պատճութեան մէջ հասարակական կեանքի ձևերի յաշ ջորդական փոփոխութիւնը իդէալի զարգացումն է. այդ զարգացումը կատարուում է ինարկէ ոչ թէ զուտ տրամադրանական սղիսկէ ինչպէս Հեղեղն էր ընդունում, այլ աստիճանաբար ինքնամանաչութեան և իրենց արժանապատւութեան ու իրաւունքների աւելի բարձր ըմբռնման համարով անհատ-

ների միահամուռ գործակցութեամբ: Ինչպէս որ ամեն մի պետութիւն հէնց այն է, ինչ որ նրան պատկերացնում են քաղաքացիք, այնպէս և առանձին անհատն այն է, ինչ որ նա իւր էութիւնն է համարում: Մարդուս էութիւնը բոլոր ազգերի մէջ և բոլոր ժամանակներում օրյեկտիւ տեսակէտով միևնույն է, մինչդեռ սուբյեկտիւ կերպով նա փոփոխում է: արդի քաղաքակրթւած մարդը այլ կերպ է հասկանում իւր կոչումը, քան թէ հին (անտիկ) յոյնը. սա ուրիշ կերպ էր նայում իւր վրայ: քան թէ մի Ասորեստանի բնակիչ իսկ սա էլ, ըստ իւր կարգի, իրեն մի այլ բան էր համարում, քան նախնական վայրենին: Ուր որ մարդը իւր եսի մասին նոր հասկացողութեան էր գալիս, այնտեղ նա ձգտել է համակերպել իւր արտաքին գրութիւնը այդ հասկացողութեանը: Հնդկաստանցի շուգրան, որը հաւատացած էր, թէ ինքը ստորեն կարգի արարած է, այդպէս հէնց շուգրա էլ մնում էր. մինչդեռ հոռմէացի պէէրէյը իւր արժանապատութեան գիտակցութեանն հասնելով՝ սկսեց իրաւահաւասարութեան ձգտել: Այս պատճառով և պատմական կեանքը իսկապէս ասած այն մոմենտից է սկսում, երբ մարդ առաջին անգամ ինքնաճանաչութեան աւելի բարձր աստիճանին է հասնում, քան որի վրայ գտնւել էր նախնական ժամանակներում: Որոշ չափով ուրեմն չեղեն էլ է իրաւացի պատմութիւնը՝ հոգու իւր էութիւնը գիտակցելու առաջադիմութիւնն ընդունելով: Այդ մի սուբյեկտիւ պոոցէս է. մարդու էութիւնն այն է, ինչպէս որ մարդն ըմբռնում է այն. և որովհետեւ այս ինքնաճանաչութեան մէջ իւրաքանչիւր աստիճան մի նոր ըմբռնումն է, ապա հոգու էութիւնը կեանք ու զարգացում է, ինչպէս որ նիւթի էութիւնը—յաւիտենական հանգիստ ու անշարժութիւն է. նիւթը միշտ միևնույն է. իսկ հոգին այն է, ինչ որ իւր մասին մտածում է:

Միայն այս ներքին փորձի հոգի վրայ է առաջ գալիս զարգացման՝ որպէս կատարելազործման գաղափարը. մեզ համար սեփական զարգացումը ուրիշ բան չէ, բայց եթէ գիտելիքների աստիճանական աճմանը և մտքի

պայծառացման գիտակցումը. և այս պառցէաները գիտակցում ենք իբրև մեր մտածող էութեան բարելաւում, վսեմացում<sup>1)</sup>). իսկ այս վսեմացման գիտակցութիւնը մեր մէջ պարտականութեան ոեֆլեկտիւ պոոցէս է առաջ բերում<sup>2)</sup>. անձնաւորութեան համար մի ներքին տարրական պարտականութիւն, այսինքն պարտականութիւն մտքով աշխատելու այն բոլորի վրայ, ինչ որ նրան մատչելի է, պարտականութիւն քննադատելու, քանի որ քննադատութիւնն է միայն, որ որոշում է մարդու մտքերը և գործերը՝ անձնաւորութեան զարգացման վերաբերմամբ զրանց ունեցած բարձր և ցածր աստիճանի արժեքաւորութեան համեմատ<sup>3)</sup>. այս գործունէութեան նպատակները բարձրագոյն մտաւոր բարիբն են—ճշմարտութիւն և նպատակների հաստատումն, որոնք կարողանային անձնաւորութեանը իւր կանգնածից վեր բարձրացնել, իդէալի մշակումն, դէպի որը ձգտելը մի բարձրագոյն հակումն է ստորիններին հակադրուղ<sup>4)</sup>): Առանց շօշափելու պարտաճանաչութեան ծագման հարցը, սակայն կարող ենք այժմ իսկ նկատել, որ բարոյական զարգապետութիւնները վերին աստիճանի փոփոխական են, բայց նրանց նիմքը կենդանական աշխարհից մարդկութեան զատւելու սկզբից ի վեր մի նշանախեց անդամ չի փոխւել. բարոյական իդէալը միշտ իւր գործունէութեան համար մի նորմայ մշակեն ու կեանքի մէջ այդ նորմային անշեղ հետևելն է եղել, ինչպէս մամնաւորապէս արդարութեան իդէալն այն է եղել, որ ուրիշների հետ նրանց արժանապատւութեան համեմատ զարւին և պահպանեն նրանց ճաշաչւած արժանապատւութիւնը<sup>5)</sup>: Սկզբում գիտելիքները թոյլ են եղել միտքը ծանրաշարժ, քննադատութեան

1) Современное учение о нравственности и ихъ исторія (Отеч. Записки, 1870, IV, 437).

2) Ibid, 438. 5) Ibid, 439. 4) Ibid, 440.

3) Формула прогресса г. Михайловского (Отеч. Записки, 1870, II, 239).

եղանակները անմշակ, որով գործունէութեան այնպիսի նորմաներ և ուրիշի արժանապատռութեան այնպիսի զնահատումն էին տեղի ունենում, որնք աւելի զարգացած գիտակցութեան համար սխալ են երկում: Այսպէս՝ մեզ համար հիմ-հոռմէական Virtus-ը, որը մի նեղ հասկացւած հայրենասիրութիւն և սազմիկ քաջութիւն էր, այլև ստրուկի մարդկային արժանապատռութեան զնահատումը, որով ստրուկի անձն (persona) չէր, այլ մի իր (res) էր—սխալ են երկում, և մենք ողջունում ենք յետագայ ստոյիկեան ների վարդապատռութիւնը, որպէս մի աւելի ճշմարիտ հայեցք, որովհետեւ ստոյիկեանները յայտարարեցին, որ իմաստունի հայրենիքը—տիեզերքն է, որ առաքինութիւնը միմիայն արտաքին գործողութեան մէջ չէ, այլ նաև նոգուներքին վիճակի մէջ, և որ բոլոր մարդիկ իրենց բարոյական արժանապատռութեամբ հաւասար են: Հասարակութեան մէջ բոլոր յարաբերութիւնները յենուում են մարդկանց իրենց և ուրիշի արժանիքի զնահատման վրայ:

Աշխարհիս երեսին ոչինչ միանգամից չի առաջ գալիս: Եթէ մարդկանց գոյութիւն եղակէտը մի այնպիսի վիճակ է եղել, երբ անձը զեկավարւել է բացառապէս իւր ըիրտ անասնական որպիսութիւն ունեցող բնազդներով և հէնց այդ չափ էլ ուրիշ անձի արժանիքն է զնահատուկ, և եթէ միւս կողմից՝ մենք աւելի բարձր վիճակի ենք հասել, այն է զիտակցում ենք մեր մէջ բարոյական «Ես»ի գոյութիւնը, որը իւր համոզմունքը բանականութեամբ չարգարացող հակումներից վեր է դասում, և ընդունում ենք բոլոր մարդկանց համար հաւասար արժանիք, նրանց մէջ գտնաւած բարոյական զարգացման հնարաւորութեան համեմատ—ապա այս երկու մոմենտների միջև, ելակէտի և յանդման կէտի (terminus a quo և terminus ad quem) միջև անցման բազմաթիւ աստիճաններ գոյութիւն ունեն, որ կարելի էր իդէալականօրէն որոշ հերթով կարգել որպէս իդէալների աստիճանական զարգացումն: Միայն այնաւեղ իրական պատմութիւն գոյութիւն ունի, ուր որ յմարդը ձգտել է իրականութիւնը մինչև իդէալականը բարձրացնել և ուր իդէալականը մարմնացել է իրականութեան մէջ, որ-

չափ էլ այդ իդէալականը սխալ լինէին մեզ համար: Առաջագիմութիւնը ճշմարտութեան, բարութեան և արդարութեան իդէալների էվալիցիայ է, և եթէ լոկ բանականութիւնը, միայն Նօհէ-ը, տնօրինսիլիս լինէր պատմութեան լինը, ինչպէս մտածում է Հեգելը<sup>1)</sup>, ապա այդ ընթացքը, ինչպէս մտածարանական ընթացք կլինէր և թացքը իսկապէս մի տրամարանական ընթացք կլինէր և մարդ իւրաքանչեւը տևեալ վայրկեանում մի գիտութիւն կունենար, որը նախորդ գիտութեան եղրակացութիւնը կը-լինէր և մի աստիճան դէպի տևելի բարձր գիտութիւն: Բայց հէնց այդ է որ գոյութիւն չունի իրականութեան մէջ: Մարդկութիւնը, այսպէս ասած, խարխափելով է այն ճանապարհներով ընթացել որոնց վրայ մդկի է նրան կոյր ճակատագիրը: Խելուր չէ ասում Շելինզը, որ մի՛չե այժմ մարդկաւթեան պատմութիւնը տնօրինել են սկզբում բախտիկ արդկանից կոյր ոյժը, իսկ ապա բնութիւնը (որ մեզ համար միկնոյն բանն է), և որ միայն երրորդ շրջանում բանականութիւնը փոխարինելու է ճակատագրին և բնութեանը<sup>2)</sup>: թէև այդ էլ սխալ, որովհետեւ այն վայրկեանից, երբ մարդ իրեն բանական էակ է զգացել և իւր բանականութեան պահանջները կեանքի մէջ իրագործել է սկսել, սկիզբ է առել բանականութեան գերը տիեզերքի պատմութեան մէջ:

Հասարակութեան մէջ յիշեալ իմաստով զաղափար ների հանդէս կալը նշանակում է պատմութեան սկզբնաւորութիւնը, բայց այդ սկզբնաւորութեան մի ուրիշ մումնուր՝ քաղաքական հաստատութիւնների, այն է բարդ հասարակական կազմակերպութեան ծագին է: Ահա թէ ինչուն են ասում, թէ պատմութիւնը հնարաւոր է միայն պետութեան ծագմամբ:

Պետութիւնը հասարակական բարձրագոյն կազմակերպութիւնն է, որի հիմքը անհրաժեշտըն գործակցութիւնն է, որի հիմքը անհրաժեշտըն գործակցութիւնն է,

1) Hegel. Philosophie der Geschichte 15, 12.

2) Schelling, System des transcend. Idealismus, 603 sq: եսկապէս ասած, Շելինզի փիլիսոփայութեան մէջ այս մի փոքր այլ իմաստ ունի, բան մենք ենք նրան վերագրում:

է (կօօպերացիայ) հանդիսանում: Կան անդիտակից գործակցութիւններ, որոնք զարգանում են մասնաւոր նպատակների հետամուտ լինելու ժամանակ, առանց մտքի մասնակցութեան: Կան և այսպիսի գործակցութիւններ, որոնք դիտակցօրէն դաշտափարի համեմատ են հասրւած և ենթադրում են հասարակական նպատակների պայծառ գիտակցութիւն: Առաջին դէպքում ծառայութիւնների բնականօրէն առաջացող փոխանակումը անձնական կարիքներին բաւարարութիւն տալու գործակցութիւն է ծնեցնում. Երկրորդ դէպքում գործակցութիւնը ստեղծում է անմիջապէս աչքի առաջ ունենալով մի ամբողջ հասարակութեան գոյութիւն ենթադրող նպատակներ, կազմակերպութիւններից մէկը ծնունդ է առնում անհատների ջանքերով ինքնապահանման համար, միւսը — մի ամբողջ հաւաքական մարմին (ազգեղատի) ինքնապահանման ջանքերով: Հէնց այս վերջինը, որը գիտակցարար կատարում է հասարակական նպատակների համար զեկավարման և զսպման գործողութիւնները, քաղաքական կազմակերպութիւն է հանդիսանում: Ինչ վերաբերում է այս կազմակերպութեան էվոլյուցիային, այդ, մասնաւոնդ սկզբում, միայն ստիպողական միջոցներով է կատարում. հասարակութեան մէջ անձի զլիսաւրութիւն է հաստատում, պայմանաւորւած աւագութեամբ, փիզիքական ոյժով, մասւոր գերազանցութեամբ և այն. և միայն ժամանակի ընթացքում այդ մնայուն հիմնարկութիւն է գառնում, որի անհրաժեշտութիւնը ամրապնդում է հասարակական մասն միւսթիւնների միջև եղած պատերազմական գործողութիւնների յարատեութեամբ, և որը նախնական հասարակութեան մէջ կարող է պահպանել միայն իշխանութիւնը ժառանգութիւն տալով: «Մի հիմնարկութիւն, Սպենսերի ասելով, չի կարող նախնական համայնքի մէջ յարատել լինել, մինչև որ նոյն համայնքի կազմի մէջ մտած իւրաքանչիւր անհատի կոչումն ու գործողութիւնները որոշ ում են նրա անհատական ունակութիւններով<sup>1)</sup>: Պետու-

թիւնների կազմակերպութը քաղաքակրթութեան զարգացման սկիզբն է հանդիսացել. ուր քաղաքական կազմակերպութիւն չի եղել, այնտեղ առաջադիմութիւն էլ համարեագոյութիւն չի ունեցել, և ընդհակառակը՝ այն հին հասարակութիւնները, ուր առաջին անգամ բաւականին զարգացած քաղաքակրթութեան ենք հանդիպում, ինքնակալական կառավարութեան տակ են գտնւելիս եղել: Իհարկէ, այս մի անհրաժեշտ պայման չէ (conditio, sine qua non) ամեն մի քաղաքակրթութեան համար, այլ լոկ նրա ոկզինաւորութեան պայմանն է, որովհետեւ այդ տեսակի կազմակերպութիւնը նպաստաւոր է գոյութեան կուռում: Նախնական հասարակութիւնների կենցաղի պայմաններում այլ կերպ չէր էլ կարող լինել: Պատերազմը շաղկապում էր խմբերը, մէկը միւսին ենթարկում, անհատներին գործակցութեան էր հարկադրում, զօրեղացնում էր հասարակութեան մէջ իշխանութեան տարրը: Հաւասար պայմաններում (caeteris paribus) երկու հասարակութիւնից յաղթողն այն մէկն էր հանդիսանում, ուր որ սազմական գործակցութիւնը հանրական էր, ուր որ պատերազմողների ջանքերին ամենատիժ չափով աշակցութիւն էին ցոյց տալիս չպատերազմողների ջանքերը, ուր որ սազմիկներից բաղկացած մասը կարելիին չափ թւով մեծագոյն էր հանդիսանում արտաքրողների մասի հետ համեմատած, ուր բոլորի ջանքերը ամենանպատակայարմար կերպով էին համախմբուում: Այս ամենը ենթագրում է ոչ միայն զսպող, այլ և զբողութիւնների ստիպողական մեքանիզմների գոյութիւն: Բայց մի այսպիսի կազմւածք, միւս կողմից, դիմադրում է փոփոխութիւններին, իսկ հէնց այդպիսի կազմւածքն է, որ յատուկ չէ մանր նախնական խմբերին: Ճիշտ է, բռնակալական պիտութեան մէջ ձուլւած անհատում զարգանում էր մեծ մասամբ հլու հնապանդւելու բնագդ, վստահութիւն դէպի հասարակական հեղինակութիւնը, բութ անշարժութիւն, բայց դրա փոխարէն ընդպարձակ երկրի (տերիտորիալի) վրայ գաղաքարում էր ներքին կոիւը, իսկ արտաքին կոիւն

1) Спенсеръ. Развитіе политическихъ учрежденій, 129 ед.

էլ այլու չեր զբաղեցնում բոլոր ազատ մարդկանց, որով  
հնարաւոր էր գառնում մի խոշոր թւով մարդկանց աշ-  
խասել իրենց համար, իսկ այս նպաստում էր կամաւոր  
գործակցութեան զարգացմանը և որոշ չափով ազատագրում  
էր անհատին: Դրա հետ միասին խոշոր կազմակերպու-  
թիւնը զօրեղացնելով իւր գլխի, պետի իշխանութիւնը,  
վերջինիս հէնց սկզբներում իսկ մի այնպիսի անձնաւորու-  
թիւն էր գարձնում, որը թէ իւր ուժով և թէ գործունէու-  
թեան վայրի ընդարձակութեամբ ընդունակ էր հանդիսա-  
նում պատմութեան մէջ առաջ բերելու ամենամեծ քանա-  
կութեամբ փոփոխութիւններ քաղաքակրթութեան ստորին  
աստիճանի օրով: Ինչ վերաբերում է խոշոր կազմակերպու-  
թեան յետ կասեցնող ուժին, երբեմն զաղափարներ էլ են  
լինում, որոնք յաճախ պատմութեան շարժումը յետ են կա-  
սեցնում:

Արդ, ի՞նչն է այդ շարժման խկական էութիւնը, ի՞նչն  
է տարբերում պատմութեան ընթացքը ուրիշ փոփոխու-  
թիւններից: Այս հարցին զանազան պատասխաններ են տեսլ.  
ըստց պատմական շարժման էութեան խնդիրը կարելի է  
համարել պատմութեան տեսութեան մէջ ամենից ամենակ  
հարցերից մէկը:

Այս երեսյթի առաջին պատճառն այն է, որ շատ  
քչերն են հարկաւոր համարել հարցը ըստինքեան քննու-  
թեան ենթարկել: Երկրորդ պատճառն այն է, որ մի  
խնդրում, ուր ամեն բանից առաջ պէտք է տարրերի վեր-  
լուծումը (անալիզ) կատարել, մէծամասնութեան կողմից  
հնարաւոր է համարել իրեւ ելակէտ ընդունել այնպիսի  
իրողութիւններ, որոնք ըստինքեան բարդ են և մարդ-  
կային գործունէութեան բարդ արդիւնքներ են հանդիսա-  
նում, արդիւնքներ, որոնք յետապայ գործունէութեան հա-  
մար պատճառ են գառնում: Զնայելով սակայն, որ առանձին  
զբողների հայեցքները խիստ բազմազան են, մէնք դար-  
ձեալ մի քանի ընդհանուր զաղափարներ ենք նկատում, որոնք  
այդ հայեցքների հիմքն են կազմում, թէպէտ և ոչ միշտ  
ճիշտ ձեւակերպւած և յաճախ միակողմանի ներկայացւած:

Այդ գաղափարներից առաջինն է՝ որ հասարակութեան մէջ  
ինչ որ բան գոյութիւն ունի, որը դիմադրում է շարժման,  
վիճի այդ բանը պետութեան ստիպողականութեան սկզբ-  
բունքը, աւանդութիւնը, սովորութիւնը, նմանողութիւնը և  
այլն: Միւս գաղափարը սրան բոլորովին հակառակն է, այն  
որ կայ մի բան, որը ձգտում է եղած վիճակի մէջ (status quo)  
խոչընդուներն յաղթահարել և այս բանը որոնտում է ոչ այլ  
աեղյ բայց եթէ մարդկանց անձնաւորութեան մէջ: Սակայն  
մէծագոյն մասամբ չի ցոյց արւած, թէ ի՞նչ կերպ անձ-  
նաւորութիւնը՝ կարող է ազատւել ամեն ստիպողական  
ուժի, աւանդութեան, սովորութեան, նմանողական կրկնու-  
թիւնների բացառիկ տիրապետութիւնից, և թէ ի՞նչ կերպ  
մի քանիսի ազատագրութիւնը առաջ է բերում միւսների  
պատագրումը: Կան պատմութեան խոշոր հոսանքներ, որոնց  
հեռւից (և vol d'oiseau) դիտելիս՝ կարծես կարեք չկայ մինչեւ  
վերջին աստիճանը տանելու որոշ միասին ազգով ուժերի  
վերլուծումը (անալիզ). բայց այս խոշոր հոսանքների յե-  
տեւը մոռացութեան են տրում աւելի մանրերը, որոնց գուշ-  
մարից է որ, իսկապէս ասած, կազմում է իւրաքանչիւր  
խոշոր հոսանք, յիրաւի, ըստ երեսյթին, ի՞նչի համար պիտի  
մարմնի իւրաքանչիւր նիւթական մասնիկը կշռել, եւր մեզ  
յայտնի է նրա ծանրութեան կիսդրոնը: Միթէ աւելի հեշտ  
չի խօսել պարզապէս մի մողարքի պատմական գործու-  
նէութեան մասին, այդ գործունէութեան ընդհանուր պայշ-  
մանների մասին, նրա գոյութեան դարաշրջանների (էպո-  
խայ) յաջորդական կաղակցման մասին, առանց թափանչ-  
ցելու առանձին անձնաւորութիւնների այն փոխազդեցու-  
թեան ներքին պլոցիսի մէջ, որի արգելուքն է հէնց ժո-  
ղովրդի կեանքը: Աւելի հեշտ չէ արգեօք սահմանափակւել  
պատմութեան խոշոր գծերով, գործ ունենալ ընդհանուր  
պատճառների և ընդհանուր հետեւանքների հետ, որոնք էլի  
ենթարկում են որևէ ձևակերպման, քան թէ հասա-  
րակական իրողութիւնների բովանդակ ամբողջութիւնը իւր  
տարրերի վերլուծել, աչքաթող անելով այդ ընդհանուր  
պատճառները եղակի իրողութիւնների բազմութեան յե-

տեսում: Պատմութեան փիլիսոփաների, մեծագոյն մասը այսպէս էլ վարել է, քանի որ իրենց խնդրի էութիւնը պատմական փաստերի ընդհանրացումն է. իսկ սոցիոլոգիները (հասարակագէտները), որոնք ընդհակառակը այդ փաստերի վերլուծութեան մէջ պէտք է մինչև վերջին ծայրը հասնէին, գերագասիկ են դորձ ունենալ բարդ երևոյթների ընդհանուր հասկացողութիւնների հետ, առանց մտքով խորասուզւելու հասարակութեան այն նկրքին աշխատանոցի ներսը, որը արտադրում է այն ամենը, ինչ որ նրանք ձգտում են դասաւորել, համակարգել, սիստեմի բերել, ձևակերպել՝ վերօրգանական միջավայրի գանաղանտարբերի փոխադարձ յարաբերութիւնների, նոցա էվոլյուցիայի հղանակի և այն մասին խօսելիս: Այս մատառոր դործողութիւնների պատճռով մոռացութեան է արևում պատմական պրոցեսի իսկական էութիւնը: Վերջապէս, երբորդ կարծիքն էլ այն է, որ պատմական պրոցեսն ըստ ինքեան շատ հասկանալի մի բան է. ինչ որ կենդանի է պիտի փոփոխի. հասարակութեան արտաքին կերպարանքն էլ պիտի փոփոխի, որովհետեւ մարդկի շարունակ փոփոխութեան են ձգումն Այդ, ի հարկէ, ճշմարիտ է, բայց իրաւ անորոշ մի ճշմարտութիւն է, և ինչ քան էլ որ այդ ճշմարտութիւնը պարզ և ակնյայտնի լինի, նա յետագայ զարգացման է կարօտ, գոնէ նրա համար, որպէս զի առաջ չգտն պատմական պրոցեսի այնպիսի տեսութիւններ (թէորիաներ), որոնք անկարող են այն բացատրել: Այսաեղ պիտի այն հարցը լուծել, թէ պատմութեան ընդհանուր հոսանքները ինչպէս են ստեղծւում և թէ ինչպէս են կատարում նրա փոփոխութիւնները դէպի այս կամ այն հունով է ուղղում և առաջացնում այս կամ այն փոփոխութիւնը: Մեզ պատասխանում են, որ այդ՝ մարդ-անձնաւորութիւնն է. բայց թէ ինչպէս է այդ բոլորը կատարում մեծ մասնք մնում է չբացատրած, թէև առանձնակի մտքեր են յայտնում արժանի ամենայն ուշադրութեան: Պարզ ճշշմարտութիւնը չի ձեռք բերում, եթէ մօտենում ենք նրան ակնյայտնի դիտաւորութեամբ՝ մի յատուկ նպատակի հա-

մար (ad hoc) յօրինւած դարձւացքներով արտայայտւած իդոլոգիական բանաձևերի կազապարով այն ձևակերպելու: Մեր կարծիքով այստեղ ամենից էականը պատմութեան մէջ անձնաւորութեան ունեցած գերի որոշումն է<sup>4)</sup>:

Մի ժամանակ վիճաբանութիւն կար, թէ ովէ պատմութեան շարժումը առաջացնում արգեօք այսպէս կոչւած մէծ մարդկի, թէ ժողովրդական մասաները, հերոսները թէ ամբոխը: Մեզ թւում է, որ այս վէճը զուրկ է գիտական նշանակութիւնից: Ի՞նչ է մեծ մարդը, մի մարդ-անձնաւորութիւն: Ի՞նչ է ժողովրդական բազմութիւնը, մասման, մարդանձնաւորութիւնների մի ամբողջութիւն: Ուրեմն ինչի՞ մասին է վէճը: Արգեօք, մէկ անձնաւորութիւն է պատմութիւնն առաջ մղողը, թէ շատ անձնաւորութիւններ: Ասենք, թէ մէկը. բայց այդ կնշանակէ, թէ բազմութիւնը, մասն մի իներտ, կրաւորական բան է: Ասենք, թէ ամենքը. բայց այդ կնշանակէ, թէ ամենքը միատեսակ են, թէ ամենքը միենոյն մտքին միաժամանակ են գալիս և առաջ են շարժում առանց առաջնորդների: Մի բան ճշմարիտ է, շարժաման զիմաւոր գործոնը առհասարակ անձնաւորութիւններն են, բայց սրանց մէջ անվերջ աստիճանաւորում կայ՝ սկսած մեծ մարդուց, որը ուրիշներից վաղ, պայծառ և աւելի լաւ.

4) П. М-овъ Научныя основы истории цивилизаций (Знаніе, 1872. երես 89 sq. 95 sq.): նոյնի. Введеніе въ исторію мысли, 93 sq. „Цивилизація и дикія племена“, § 16, երես 307 sq. § 17, երես 97 sq. Для теоріи великихъ людей. Hegel. Philosophie der Gesch. 37 sq. Cousin, Œuvres, I, 77 sq. Carlyle. On heroes. James. Les grands hommes, les grandes pensées et le milieu. (Critique philosophique. 1881, janvier—février). Joly. Psychologie des grands hommes. 1883. Galton. Hereditary genius (ռուս. Թարգմ. „Знаніе“ ամսագրում). Fouillée. L'idée moderne du droit. P. 1878. գիրք I, զլ. V: le droit du génie. Les grands hommes et les hommes providentiels: Այս Թէորիայի ծայրակեղութիւնները վերլուծւած են Սպենսերից: Այս գիրքի ամսագրութիւնները վերլուծւած են Սպենսերից:

է ձեռկերպում հասարակական միտքը; կամ մի բոլորովին նոր գաղափար է ասպարէզ բերում և ամենից վարպետորէն է կարողանում միացնել հասարակութեան ուժերը շարժման համար, — մինչեւ ամենայնեաին մարդուկը, որը ընդունակ չէ ոչ մի բան հնարելու և ոչինչ կազմակերպելու. Արդ ով է զլիաւորապէս պատմութիւնն առաջ մղողը, այն անձնաւուր բութիւնները՝ որոնք նոր գաղափարներ են ստեղծում ու տարածում և համախմբում են հասարակութեան ուժերը շարժման համար. Ի՞նչպէս բնութեան մէջ անսակի փոփոխման դործօնը անհատի փոփոխականութիւնն է, այդպէս էլ պատմութեան մէջ անհատի ձեռներէցութիւնն է, որ փոփոխում է քաղաքակրթութիւնը և հասարակական կազմակերպութիւնը. Քաղաքակրթութիւնն և հասարակական կազմակերպութիւնն իրենք իրենց գոյութիւն չունին. առաջինի կրողներն անհատներն են, վերջինը կանգուն է; քանի հասարակութիւն կազմող անհատները անդիտակցաբար կամ գիտակցաբար պաշտպանում են այն: Եթէ տեհալ քաղաքակրթութիւնից և հասարակական կազմակերպութեան տեհալ ձեռից անդիտակից կամ գիտակցական շեղումն է առաջ եկել, արդէն գոյութիւն ունի անհատական ձեռներէցութիւն: Որքան մեծ լինի այդ շեղումը, ինչքան գիտակցական լինի և ընդունակ մարդկանց աւելի մեծ բազմութիւն իւր յիտեկից գրաւելու, այսինքն, անձնաւորութիւնների որքան աւելի մեծ քանակութեան մէջ է առաջ գալիս այդ շեղումը, այնքան աւելի զօրեղ է գործում անհատական ձեռներէցութիւնը: Պատմական գործիչ այն մարդկանց ենք անւանում, որոնք կամ բոլորովին նոր գաղափարներ են ներմուծել, կամ առանձնայատուկ գիտակցութեամբ են գործել, կամ արտայացել են իրենց մէջ հասարակութեան բնական աճմամբ առաջացած, հասունացած կարիքները, կամ կարողացել են իրենց ծրագիրների իրագործման համար միացնել հասարակութեան ուժերը: Դրանց խիւական մեծ մարդկէ կանւանենք, եթէ նպաստել են առաջացած շեղումներն, թէկուզ իրենց ժամանակին յաջողութիւն ունեցած չինին: Յամեն գէպս պատմութեան շարժիչը անձնաւուր անձնաւութիւնն է,

որը վերամշակում է քաղաքակրթութիւնը և հասարակական ձեռիրը, երբ որանք իրեն այլնս բաւարարութիւն չեն տալիս: Հասարակութիւնը մշտապէս ինքն իրեն ուղղող մի մեքանիզմ է, մշտապէս ինքն իրեն պահպանող մի օրգանիզմ է, մշտապէս ինքն իրեն կատարելագործող մի երկ է արևեստի: Բայց այս գործիչը, այս մեքենավարը, բժիշկը, արևեստաւորը հասարակութիւնից դուրս չէ գրանցում: կա նոյն ինքն հասարակութիւնն է: իսկ որովհետեւ ոտ դիսկրետ և ոչ թէ կոնկրետ մի ամբողջութիւն է, ապա և այլպիսի գերում հանդէս են գալիս հէց լուր առանձին անդամները:

Բայց ահա թէ ինչ գուրու եկաւ: Մասձովներից ոմանք հետեցրին, այստեղից մարդու իւր գործունէութեան մէջ ապատ լինելու գաղափարը, և լորանն, օրինակ, քննադատում է փիլիսոփաներին և պատմարաններին, որոնք պատմութեան փիլիսոփայութեան մէջ անհրաժեշտութեան գաղափարն էին մացնում, լինի այդ անհրաժեշտութիւնը Աստուծոյ կամքի (Բոսսիւէտ), բնութեան օրէնքների (Վիկո), Մօնակութիօ, Հերգիր, Ռընան, Կոնս, Բոկլ), տրամաբանութեան օրէնքների մէջ (Հեգել), պատճանների և հետեւանքների պատճանական շաղկապունիների մէջ (Վոլտեր, Ֆրիցը րիխ Մեծ, Տյեր). ըստ Լորանի՝ այս լուրը ճակատագրականութեան (Փատալիզմ) զանազան տեսակներ են՝ կաթոլիկ, դասական, բնութեան, կլիմայի և ցեղի ճակատագրականութիւնն, յեղափոխական, պանթէիստականութիւնն, ընդհանուր օրէնքների ճակատագրականութիւնն (): Խնդրի այս կողմի վերաբերմաբը մենք արդէն արտայայտեցինք միեր հայեացքները, որ և կարող ենք այժմ ձևակերպել հետեւել գրութիւնների մէջ.

1) Մարդու գործունէութիւնը առանց պատճառի չէ, ինչպէս և այդ գործունէութեան շարժառիթները, (որոնց թւումն է նաև անհատական ձեռներէցութիւնը).

4) Laurent, Etudes sur l'histoire de l'humanité XVIII, I գիրք, I գլուխ.

- 2) Այդ գործունէութիւնը օրէնքներով է անօրինութեմ.  
 3) Մինչդեռ վերջիններիս ներգործութիւնները փոխակերպում են զանազան պայմանների ազդեցութեամբ,  
 4) Որոնց այս կամ այն զուգակցումը բոլորովին պատահական է:

Պատմութեան մէջ իւր ձեռներէցութիւնը մէջ բերող այս կամ այն անձնաւորութեան հանդէս գալը, այդ պատճառով, բոլորովին պատահական է հասարակութիւնների էվոլյուցիայի օրէնքի վերաբերմամբ. չի կարելի ասել, որ եւրաքանչիւր տեեալ մոմենտում հանդէս են գալիս հէնց այնպիսի մարդիկ, որպիսիք որ հարկաւոր են ըստ էվոլյուցիայի օրէնքի: Թէ ինչու ֆրանսիայում Միքարոյից յետոյ հանդէս եկաւ Ռոբերսպիերը, իսկ Ռոբերսպիերից յետոյ Բունապարտ՝ այդ բանը ոչ մի բնդհանուր օրէնք չի բացարի: Այն ինչ ըստ Հեգելի և Կոռլէնի մեծ մարդիկ բացարձակ ոգու զարգացման սկզբունքների կրողներն են նրա առանձին մոմենտներում: Երկու հայեացքն էլ թէ Լորանինը, թէ Հեգելինը, իստ չափազանցիցնում են անհատի նշանակութիւնը: Բայտ առաջինի, նրա գործունէութիւնը կատարելապէս ազատ է, ըստ երկրորդի նա պատմութեան նոյն ինքն ոգու մարմնացումն է: Բայց այս վերջին հայեացքը արգէն մի անցումն է դէպի մի ուրիշ հայեացք, որի համաձայն անհատի ձեռներէցութիւնը ոչինչ է. անհատը լոկ մի հայելի է, որը արտացոլում է բազմութեան, մասայի վեճակը, կարծէք թէ նշանաւոր մարդը մի աւելի կատարեալ մտաւոր գործարանի (ապարատի) տէրը չէ, որով այնպէս է վերամշակում հասարակութեան մէջ թափառող գաղափարներն, ինչպէս չէին վերամշակի բիւրաւոր սովորական անձնաւորութիւններ, կամ կարծես թէ անհատը հասարակական յարաբերութիւնների շնորհիւ (իշխանութեան, յատուկ փորձառութիւնով օժտող միջոցների, բազմակողմանի ուսման և այլն շնորհիւ) չի կարող առանձնայատուկ պայմանների մէջ դրւած լինել, որ և նրան հնարաւորութիւն տային՝ մասաներին անմատչելի մի աշխատանք կատարելու: Ամեն մարդ իւր ազգի և իւր ժամանակի գաւակն է, բայց

ամեն մարդ ունի նաև որևէ անհատական բան, միայն այս անհատական շեղումներն են, որ շարժում են քաղաքակրթութիւնը և հասարակական ձեերը, իսկ ամենախոշոր շեղումները անմահութեան իրաւունք են տալիս: Անհատի ձեռներէցութեան իրաքանչիւր արգասիք նոյն անհատի հետքերն է կրում իւր վրայ և իւր վրայ դրօշմում է այն՝ պատմութեան մէջ, մինք ասում ենք, օրինակ, Լիւդովիկոս ԽIV-ի, Ֆրիդրիխ II-ի դար, աւելի մեծ իրաւունքով ասում ենք Սոկրատեան շարժում, Կոպերնիկի սիստեմ, Դարվինի տեսութիւն: Ինչ որ անհատական չէ, այլ աւելի մասայական է, այդպէս էլ նշանակում ենք. ասում ենք Ֆրանսիական յեղափոխութիւն, բայց Նապոլէոն I-ի կայսրութիւն, ումանտիկ գրականութիւն, բայց Բայրոնիպմ, և այլն և այլն: Զի կարելի ժխտել, որ Պերիկլէսը, Լիւդովիկոս ԽIV-ը, Ֆրիդրիխ II-ը, Նապոլէոն I-ը իրենց անձնաւորութեան կնիքը դըել են իրենց ժամանակի վրայ, որ էլ աւելի անհատական բան կզտնենք Սոկրատէսի փիլիսոփայութեան, Կոպերնիկի սիստեմի, Դարվինի տեսութեան, Բայրոնի բանաստեղծութեան մէջ, բայց որ բոլորովին մասայական բնաւորութիւն ունին այնպիսի անցքեր և շարժումներ, ինչպէս օրինակ ազգերի գաղթը, խաչակրաց արշաւանքները, կոմմունալ յեղափոխութիւնը միջին դարերում, ժակերիան, Ֆրանսիական յեղափոխութիւնը, հումանիզմը, կեղծ կլասիքականութիւնը, ոսմանտիզմը և այլն: Կարելի է իսկապէս ժխտել անհատի ձեռներէցութեան նշանակութիւնը: Գիտենք, օրինակ, թէ ինչպէս ընկաւ յունական բազմաստածութիւնը: Արդեօք իւր ժամանակակիցներին էր ցոլացնում իւր վրայ Քսենոփանը, երբ Քրիստոսից VI դար առաջ, ոլիմպիական աստեածների հաւատի լիակատար անկումից հազար տարի առաջ, Ժըլտում էր նրանց գոյութիւնը: Իհարկէ ոչ, մինչդեռ հէնց այդպիսի առանձին անձնաւորութիւններն էին, որ խախտեցին դասական (անտիկ) գիցարանութեան հաւատը: Արդեօք իւր դարաշրջանն էր արտացոլում իւր վրայ Թալէսը, երբ քաղաքների քաղաքական դաշնակցութիւնն էր

Քարողում: Իհարկէ նչ, մինչդեռ այդ գաղափարը աւելի ուշ ժամանակում աքէցիան միութեան մէջ իրականացաւ, երբ նոյն գաղափարի նոր քարոզիչներ յայտնեցին և նրա իրականացման համար աւելի քարեյածող պայմաններ գտան: Չենք ասում, որ անհատական ամեն մի նախաձեռնութիւն դիտակցական է եղել, բայց քաղաքակրթութեան և հասարակական ձևերի տիրապեսող տիպից մարդու առանց անդիտակից շեղումի էլ առաջարկացում չէր կարող լինել: Ինչ որ հասարակութեան քաղաքակրթութեան մէջ է մանում, ինչ որ նրա հասարակական կազմակերպութիւնն է կազմում՝ այդ ամենը գորութիւն ունի անձնաւորութեան մէջ և անձնաւորութեան միջոցով: Աս գիտակցօրէն, թէ անդիտակցօրէն տուեղծում է այդ բոլորը, աւանդում է այլ սերունդներին (աւանդութիւն, կոնսերվացիայ) կամ փոխխում է իւր ձեռներէցութեամբ: Անձնաւորութիւնն է պատմութեան զարծօնը: Այս մի ակնյայտնի ճշմարտութիւն է, և բաւական է ամենաթիթե մի ակնյարկ ձգենք պատմափիլիսոփայական դրականութեան վրայ համոզելու համար, որ այդ է եղել ոոյն առարկայով վրացող բոլոր մարդկանց պայծառ ձեւակերպած կամ քօղարկւած համոզումը: Ամբողջ խնդիրն այն է միայն, որ հասարակութեան իրաքանչիւր անձնաւորութիւն ընդհանուր ախպի ինչ որ մի պատճէնը համարենք, և որ ընդունենք, որ մի անձնաւորութիւն կարող է ամբողջ մասաների ուղղութիւն տալ: Բայց և այնպէս հարկ է լինում յայտնի ճշմարտութիւնները ամենից յանախ յիշեցնել, որպէսզի չմոռացեն:

Այժմ ցոյց տանք, որ հնարաւոր է խոշոր անձնաւորութիւնների աղղեցութիւնը մասաների վրայ<sup>1)</sup>: Անշուշտ այն-

1) Մեծ մարդիկ մեծ խորնութիւների, ծրագրերի ծրբ են ունենում (Joly, 260) և աւել են լինում մանրամասնութիւնների յիշողութիւնը եւ իրափորձման անդունութիւնը միացնելու կարողութեան, բայց նրանց այդ յիշողութիւնն ու անդունութիւնը կրաւորական չեն (261), առաջնը մտափառում է ինչ որ կարեւոր է ծրագրի համար, երկրորդը ամբողջովին նիրաւած է այն բաներին, ինչ որ հարկաւոր է

աեղ աւելի արագ է փոփոխում հասարակութիւնը, ուր որ աւելի գոյութիւն ունին անձնաւորութիւններ՝ նրա աւելի ձեերը փոփոխելու ձգտող և այս կամ այլ ուղղութեամբ գործող անկախ վերջինիս առաջադիմական կամ յետադիմական լինելուց: Ընդհակառակը, ուր որ խիստ շատ կան այնպիսի մարդիկ, որոնք ձգտում են եղած վիճակը պահպանել (statum quo) և դրա համար ոյժ և միջոցներ ունեն, կամ որոնք ամլրում են օրընտօրէ՝ այնտեղ շարժում չի կարող լինել այնտեղ լճացնում, անշարժութիւն ենք աեսնում: Այժմ ենթագրենք որ առաջին հասարակութեան մէջ մի, անշուշտ արտասովոր, մարդում մի գաղտփար և հանդէս գալիս, գիշուք, հողը խել բնակիչներից յօդուա փոքրամասնութեան, որը անսարամադիր չէ այդ բանից օգտւելու և վաղ թէ ուշ այդ սիստեմը կիրարկելու է: և տհա այդ գաղափարի առաջ գալը մեր հնթագրեալ անձի մտքում և նրա կողմից նոյն նապատակով փոքրամասնութեան կազմակերպելը արագացնում է ընթացքը: Բայց մի խոշոր անձնաւորութիւն կարող է և մի ուրիշ սիստեմ հնարել, կազմակերպելու ուրիշ ուժեր այգովիսի մի պրոցես գանդաղեցնելու կամ նոյն խակ գրա առաջն անելու դիտառութիւնը: Ընդհանրապէս կարելի է ասել, որ այգովիսի անձնաւորութիւնները հէնց արագացնող կամ գանդաղեցնող եղանակներու կամ ներկուրծում հասարակութեան մէջ կատար առջ այս կամ այն պրոցեսի վրայ: Մի անձի գործունէութիւնը, որը արագացնում է առաջադիմական պրոցեսը, կամ գանդաղեցնութիւնը յետադիմականը, առաջադիմական է, և ընդհակառակը, յետադիմական պրոցեսին օգնող կամ առաջադրեականին արգելող գործունէութիւնն անձի մի յետադիմական գործունէութիւն է: Այգովիսի մարդկանց ահարկին աղղեցութիւնը պատմութեան վրայ իսկի հրաշք ծրագրի իրագործման համար: Դրան միանում է հնարաւորի և ապագայի երեւակայելը մի հաւատով գլափ այն, ինչ որ զօրեկ է երեւակայում (262 sq.): Մեծ մարդիկ ժամանակակիցների մէջ աշակցութիւն դանել դիտեն (113 sq. 155 sq.):

չէ, որովհետեւ գլանցից իւրաքանչիւրը հանդէս չէ գալիս որպէս երկնքից ընկած մի աղղակ (deus ex machina), այլ գործում է որոշ հանգամանքների զօրութեամբ: Ուշադրաւ է, որ խոշոր անձնաւորութիւնները ներքին խմորման գարաշը ջանակում են հանդէս գալիս, երբ եղած վիճակին (status quo) այսպէս թէ այնպէս հակամարտ տարրեր են լինում հասարակութեան մէջ. խոշոր անձնաւորութեան հանձնարեղութիւնն էլ հէնց այն է, որ կարողանայ հասկանալ, թէ ինչպէս համախմբել այդ տարրերը կանխօրօք տրւած այս կամ այն նպատակին համսնելու համար և ջլատել դիմադրի տարրերի ջանքերը: Ինչպէս որ ըստ մեքենագիտութեան մի փոքրիկ ուժի գործադրութեամբ կարելի է խոշոր ծանրութիւն բարձրացնել, բաւական է որ իմանանք, թէ ինչ կէտում պէտք է ոյժը գործադրի, նոյնպէս էլ յիշեալ անձնաւորութիւնները խոշոր յիշաշը ջումներ են առաջացնում, իմանալով թէ ուր պիտի գործադրեն իրենց ոյժը: Իսկական մեծ մարդիկ հէնց նրանով են մեծ, որ սակաւաթիւ տարրերից հասարակութիւնը այս կամ այն կողմ մղող ոյժ են կարողանում են ստեղծել. երբ այդ տարրերը բաղմաթիւ են և ինքն ըստ ինքեան զօրեղ են լինում, էլ առանձին անձնաւորութիւնը չի կարող իրեն որևէ յատուկ վաստակ վերադրել: Վերջապէս որովհետեւ մեծ մարդիկ ներգործում են անմիջապէս միայն այն հասարակութեան վրայ, որի մէջ ծնւել են, և իրենց ժամանակակիցների վրայ, ապա սրանով իսկ նրանց նշանակութեանը սահման է գծուում. նրանք չեն կարող վճռական ազդեցութիւն ունենալ ամրող մարդկութեան պատմութեան ընթացքի վրայ. Ալպեան լինուերը խիստ մեծ են փոքրիկ Շվեյցարիայի համար, բայց երկրի գնդածեութիւնը չեն ոչնչացնում: Բացի այդ, մեծ մարդկանց գործունչութիւնը փոխադարձարպ չէ գործացուում, քանի որ ապագայի մարդկանց կողքին գոյութիւն ունեն և անցեալի մարդիկ, ինչպէս որ չէ զորքացւում են և սովորական մահկանացուների ջանքերը, այնպէս որ այստեղից ստացւող ընդհանուր հետեւանքի ուղղութիւնը աւելի կամ պակաս չափով համապատասխանում է այն գծին, որով հասարակութեան առաջ

տանում է վոլիւցիայի օրէնքները և այն ընդհանուր պայմանները, որոնց մէջ զրւած է հասարակութիւնը:

Ինձ կարող են յանդիմանել, թէ իս չափազանցեցնում էմ անհատի ձեռներէցութեան նշանակութիւնը պատմական պրոցեսի գործում: Ահա իմ պատմախանը, իբրև ամփոփումն գրքիս զանազան մասերում արտայատւած մտքերի: Քաղաքակրթական և հասարակական կեանքում կարևոր գերէ է կատարում նմանողական կրկնութեան տարրը, որը պահպանում է քաղաքակրթութեան ձեւերի անփոփոխելիութիւնը. հակառակ տարրն է ամեն մի նորակերտում, որպէս մի շեղում իրողութիւնների կրկնութիւնից, որ առաջանում է կրկնուող իրողութիւնների նոր հանդիպումից. հէնց այս է անձնաւորութեան ձեռներէցութիւնը, որը պատմական պրոցեսում նոյն գերն է կատարում, ինչոր տեսակների կերպափոխման մէջ (տրանսֆորմիզմ) պատկանում է անհատների փոփոխականութեանը: Ուր որ անձնաւորութիւնները կրկնում են միենոյն մտքերը, գործառնութիւնները, յարաքերութիւնները և այլն, այնտեղ չկայ պատմութիւն, այլ լոկ անփոփոխ կենցաղ գոյութիւն ունի. հէնց որ հանդէս է եկել մի անփոխակից կամ գիտակցական շեղումն տւեալ քաղաքակրթութիւնից կամ հասարակական կականակերպութեան տւեալ ձեւերից, արդէն կայ անհատի ձեռներէցութիւն: Քաղաքակրթութեան փոփոխումը միայն այն ժամանակ է հնարաւոր, երբ անհատական միաքը որևէ նոր բան է մշակում, որն ամբոխի սեփականութիւնն է գառնում: Նախապատմական ժամանակներում առանձին անձնաւորութիւնը ոչինչ է. ինչ որ գործել է այստեղ այս կամ այն անձնաւորութիւնը, նոյնքան իրաւունք ունենք տւեալ ցեղի քաղաքակրթութեան ընդհանուր վիճակին վերագրելու, ինչպէս որ իրաւունք ունենք սպիտակ մրջիւնների, մեղունների, կուղբերի շինութիւնները նոյն կենդանիների ընդհանուր յատկութիւնը համարել: Առանց ձեռներէցութեան, այսինքն լոկ կրկնելով հասարակական միջավայրում արգէն եղածը, անձնաւորութիւնը այսպէս ասած ենթարկում է անփոխակից էվոլիւցիայի հոսանքին: Զպէտք

է, սակայն, անհատական ձեռներէցութիւնը միակողմանի հասկանալ. իսկ այդպիսի միակողմանի հասկացողութիւն կլինէր ընդունելը, որ ոչ բոլոր անձնաւորութիւնները ձեռներէցութեան տէր են (թէկուզ ամենանւազ չափով), և ժըստելը, որ իւրաքանչիւր անձնաւորութեան ձեռներէցութիւնը նոյն հասարակութեան մէջ ծնունդ տանող և հասունացող գաղղափարների արտայայտութիւնն է միայն. ձեռներէցութիւնը հասարակութեան տւեալ աստիճանի գարգացման համապատասխանող վիճակի արգասիքն է, վերամշակւած անհատի մտածողութեամբ, ուստի և պատմական գործնի գեր չէ կարող կափարել այնպիսի ձեռներէցութիւն, որը կեանքի նետ ոյխնչ ընդհանուր րան չունի. Վերոյիշեալ յանդիմանութիւնը հասկանալի է, եթէ միայն ներկայ դէպքի համար սիսալ կերպով անձնաւորութիւնը, որպէս միաւոր, հակադրւի հասարակութեամբ, որպէս նման միաւորների մի ամբողջութեան. կարծես թէ կեանքի մէջ ձեռներէցութիւն մացնող անձնաւորութիւնը հասարակութիւնից գուրս է գտնում, և իւր թէ վերջնս ձեռներէցութեան տէր անձնաւորութիւններից չէ բաղկացած: Ես հակագրում եմ յատկապէս անհատական ձեռներէցութիւնը, որպէս նորակերտում (իննովացիայ), հոգեսոր և հասարակական աւանդութեան, որպէս հաստատւած գաղափարների, գործանութիւնների և յարաբերութիւնների միօրինակ կրկնման անձնաւորութիւնների կողմից. և նէնց այս մտքով է որ ասում եմ, թէ առանց անձնաւորութեան նորակերտու գործունէութեան քաղաքակրթութիւնն էլ, հասարակական ձեռն էլ ըստ էութեան անշարժ կը մնային: Հասարակութիւնը համարելով ոչ թէ անհատների մի հասարակ գումար, այլ մի ուրոյն միջավայր առանձին անձնաւորութիւնների վերաբերմամբ, որին վերօրգանական անունն եմ տալիս և որի ձեռները քաղաքակրթութիւն (կուլտուրա) եմ կոչում, ես անհատի ձեռներէցութիւնը բնորոշում եմ նէնց որպէս անձնաւորութեան ազատազրումն այդ միջավայրին հնթարկելուց, այսինքն անձնաւորութեան շուրջը կատարուղ միենոյն գաղափարների, գործառնութիւնների և յարաբերութիւնների կրկնութիւնից: Անձնաւորութիւնը

վերօրգանական միջավայրից զատելով, որով անթոյլաւարելի է գառնում հասարակութիւնը որպէս անձնաւորութիւնների սոսկ գումար նկատել, մենք յօրինում ենք անհատի ձեռներէցութեան՝ որպէս պատմութեան առաջիւազացման գործօնիք մեր վարդապետութիւնը: Զէ որ անհատի մատածել, թէ քաղաքակրթութիւնը և հասարակական ձեռները վորփիսւում են առանց անձնաւորութիւնների ներք գործութեան, որը զբանց ձեռներէցութիւնն է մենթազրում: Բայց եթէ անհատական ձեռներէցութիւնն անհարաժեշտ է, ապա անհրաժեշտ է նաև հասարակութեան որոշ վերաբերմունքը զէպի այդ ձեռներէցութիւնը: Նէնց նոր մաքերի, գործառնութիւնների և յարաբերութիւնների նոյն ինքն հանգէս զալը մէկն է օղակներից հասարակական մտածողութեան և վարմունքի այն ընդհանուր ուղղութեան, որով ընթանում է պատմութիւնը, հասպանվելով էվլիւցիայի օրէնքը ներին և պայմանաւորելով իւրաքանչիւր ազգի պատմական գոյութեան ընդհանուր պարագաներից:

Կարիք կայ արդեօք աւելացնելու, որ եթէ մարդը հանդէս է գալիս որպէս պատմութեան ստեղծագործող, ապա նրա ստեղծագործութեան նպատակը դարձեալ մարդն է լինում, այսինքն մի որոշ անձնաւորութիւն կամ անձնաւորութիւնների որոշ առողջութիւն: Մարդս կատարում է այն, ինչ որ օգտակար է համարում իրեն կամ ուրիշների համար, որոնց հետ որ ինքը կապակցւած է ազգային, քաղաքական, կրօնական, հասարակական, տնտեսական կամ հանրապետական համերաշնութեան կապերով: Թէկ պետութիւնը, իրաւունքը, տնտեսական յարաբերութիւնները և այն առաջ են գալիս մարդու գիտակցութիւնից անկախ, այսինքն հասարակական զաշինքի արդիւնք չեն, բայց երբ որ մարդը սկսում է զիտակցել իւր եսը, նա հոգեկան փոխազեցութեան բոլոր բնական արգելունքների և հանրակեցութեան ձեռների վրայ նայում է որպէս իրեն համար և իւր նկատմամբ գոյութիւն ունեցող բաների վրայ, և ան դրանցից այս կամ այն բանը կրելով, այսպէս թէ այնպէս ձգտում է փոփոխել զբանց:

Մարդը չի կանգ առնում մնում, թէ այդպէս

է բնութեան օրէնքը, այլ ցանկանում է փոփոխել այն. նա իրեն բնութեան տէր է համարում, և այս տեսակէտից իրաւացի էլ է: Իրականութեան մէջ եղած յարաբերութիւնները ընդհանրացնելով կստանանք բնական օրէնքների գործունէութեան բանաձեկը (Գործուլաներ). բայց այս բանաձեկը կարող են վիրաւորել աւելի զարգացած մի զգացմունք, որը և կծդտի բնական յարաբերութիւնները կերպարանափոխել կամ յարմարեցնել իւր բարձրագոյն նպատակներին և բնութեան իշխանութեան տակից գուրս գալ: Արիստոտելն առում էր, թէ ստրկութիւնը բնութեան օրէնք է: Այս, բնութեան օրէնքի գործունէութեան արդիւնք է ստրկութիւնը, որովհետեւ հիմնած է ուժեղի՝ թոյլի վրայ տարած յաղթութեան վրայ. բայց ըստ ինքնամ Արիստոտելի բոլոր զատկութիւնները հասարակական կեանքի իրողութիւնների ընդհանրացութիւններ են մի օրէնքի տեղ մէջ բերւած, որը չի կարելի զանց առնել: Սակայն, արդէն հոսմէական իրաւաբանները հասել էին այն գիտակցութեան, որ ստրկութիւնը բնական օրէնք չէ, այլ մարդկային մի կարգութիւն: Արդեօք մէնք էլ երբեմն Արիստոտելի պէս չենք վարւում, երբ իրականութեան իրողութիւնները ընդհանրացնելով բնական օրէնքների տեղ ենք դնում, որոնց չի կարելի զանց առնել: Օրէնքը պիտի ոչ թէ փորձական (էմպիրիկ) ընդհանրացում լինի, այլ պիտի ապացուցի իրի բնոյթից, իրի էութիւնից: Գոյցութեան կարել օրդանական աշխարհի մի օրէնք է, քանի որ օրդանիզմները աւելի արագ են աճում, քան իրենց գոյցութեան համար անհրաժեշտ միջոցները, որ և կարելի է ապացուցանել<sup>4)</sup>: Բայց քանի որ կարող ենք սպացուցաներ որ հասարակութեան սկզբունքը համերաշխութիւնն է, որ

4) Գարվին. Տեսակների ծագման մասին, 51 սգ. Գարվինն ասում է, որ «այդ Մալտուսի վարդապետութիւնն է, գործադրած բուսական եւ կենդանական Թագաւորութիւնների վրայ, եւ գործադրած ամենախիստ մոքով, որովհետեւ այստեղ անհնարին է թէ սնունդի արհեստական բազմացումը, թէ ամուսնութիւնից ժուժկալելու զդուշակութիւնը»: Ibid., 52:

հոգեկան վոխազգեցութեան հողի վրայ ալտրուիստական զգացումնը են առաջ գալիս, որ մարդկային գիտութիւնների առաջադիմութիւնը հասարակական տնտեսութեան արդիւնաւութիւնը կարող է զերազոյն աստիճանի հասցնել, որ տեխնիկական գիւտերով զինւած մարդուն բնութիւնը աւելի բան է տալիս, քան ինչ որ նրան իր անձի համար է հարկաւոր, և եթէ մարդը գործադրի կեանքում այն բոլորը, ինչով որ կարելի է ոչչացնել գոյութեան կախութեան մէջ, միթէ ասելու կլինենք, որ հակամարտութիւնը (անտաղոնիզմը) հասարակագիտական մի օրէնք է, որը զանց առնել չի կարելի: Մալտուսը իւր նշանաւոր տեսութիւնը ստեղծելիս Արիստոտելի վիճակին էր. բայց այստեղ էլ «համեկան իրաւաբաններ» գտնւեցին, որոնք ասացին, թէ այդ առաջ է զալիս ոչ թէ բնութեան օրէնքով, այլ մարդկանց սահմանած կարգերի չնորհիւ: Քաղաքակլիքթական և հասարակական ձեռքը պատմութեան մէջ ստեղծել են բնութեան օրէնքների ներգործութեան զօրել ազդեցութեան տակ: Բայց այդ բնութեան կայր ոյժերի ստեղծագործութիւն էր, որոնք ստեղծեցին հասարակութիւնն այնպէս, ինչպէս որ նա կարող էր լինել բնութեան օրէնքների և տեղի ու ժամանակի պայմանների համեմատ: Բնութիւնը հոդ չէր տանում: մարդու համար արդեօք լաւ թէ վատ կլինի իւր կոյր ուժերի ստեղծած հասարակական կազմակերպութեան օրով: Բայց մարդը կամեցաւ իրեն ենթարկել այն, ինչ որ բնութիւնը մարդու վրայ էր կառուցել, կամեցաւ յարմարեցնել հասարակութիւնը իւր նպատակներին, եւ ահա հասարակական անգիտակից կետնքի արդիւնքների վրայ, բիբա ուժով հիմնարկւած պետութեան վրայ, սովորոյթի իրաւոնքի վրայ, բնական զարգացմամբ ստեղծւած տընտեսական յարաբերութիւնների վրայ սկսւեց գիտակլից մտքի աշխատանքը, հանդէս եկաւ իրականի և քանականի, իրականութեան և իրէալի երկութիւնը (դուալիզմը): Մարդը տեսաւ որ ինքն է բոլոր հասարակական ձեռքը ստեղծողը, որ եթէ առաջ զանց մի ուղղութեամբ է ստեղծել կարող է և մի ուրիշ ուղղութեամբ

ստեղծագործել, որ ինքը կարող է զրանց այնպէս կիրառարա-  
նափոխել, որ իրապէս իւր պէտքերին ծառայեն, —և այդ  
ժամանակից սկսւեց մարդկային պատմութիւնը: Քաղա-  
քականութեան, իրաւունքի, տնտեսական յարաբերութիւն-  
ների բոլոր փոփոխութիւնները ահճատի գիտակցութիւ-  
նից են ծագել, որը արտայայտուեմ է հետեւալ բանաձեկի  
մէջ. «Ոչ թէ ես գոյութիւն ունեմ զրանց համար, այլ զրանք  
ինձ համար. հետեւապէս ոչ թէ ես պիտի դրանց համակրպ-  
ւեմ, այլ զրանք ինձ»: Համաշխարհային կեանքում այդ մի  
էական դարագլուխ էր. մինչև այդ՝ միջավայրն էր ենթար-  
կում իրեն ամեն մի էակի, այժմ միջավայրը պիտի են-  
թարկվի բանական էակին, առաջ մասը գոյութիւն ունէր  
ամբողջի համար, այժմ ամերողից պահանջուում է, որ ձա-  
ռայի մասին, առաջ իրականը միայն գոյութիւն ունէր,  
այժմ սկսեց առաջ գալ նաև զաղափարականը, իդէականը:

Մենք քննեցինք, թէ ի՞նչն է շարժւողը պատմութեան  
մէջ (զաղափարները և հաստատութիւնները) և ի՞նչն է  
շարժողը (անհատի ձեռներէցութիւն): Առայժմ մի կողմ  
թողնելով շարժման ձերի ինդիրը, մենք պիտի նախապէս վրձ-  
նենք նաև մի այսպիտի հարց, թէ ինչու ընդհանրապէս  
քաղաքակրթութեան շարժումը հասրաւորէ: Բանն այն է, որ  
անհատի գործունէութիւնը չի կարող մի անդամից փոփոխիչ  
աղղեցութիւն գործել ամբողջ քաղաքակրթութեան վրայ-  
բայց երբ փոփոխութիւն կատարեւէ և սրա տարրերից մէկի  
մէջ, միւսներն էլ անհրաժեշտաբար պիտի շարժւեն այն  
համապատասխանութեան գործութեամբ, որ գոյութիւն ունի  
մի քաղաքակրթութեան տարրերի միջև: Իսկ պատմական  
անւանում ենք յատկապէս այն գործունէութիւնը, որը ուղ-  
ղակի կամ անուղղակի, միջնորդապէս կամ անմիջապէս՝ փո-  
փոխում է հասարակութեան գոյութեան այս կամ այն պայման-  
ները, պայմանները, որոնք՝ ընդհանրապէս վերցւած՝ նոյն հա-  
սարակութեան զաղափարներն ու հաստատութիւններն են, հո-  
գեոր քաղաքակրթութիւնն և հասարակական ձևերն են: Կոնտը  
հասարակակիա (սոցիոլոգիան) երկու մասի բաժա-

միկայլի: Առաջինի առարկան է հասարակութեան գոյութեան  
պայմանների հիմնական ուսումնասիրութիւնը. երկրորդինը՝  
նրա մշտական շարժման օրէնքների ուսումնասիրութիւնը<sup>1)</sup>:  
Ուրիշ խօսքով ասած զրանք կարգի և առաջնադաշման  
վարդապետութիւններ են, պարզաբանում է կոնտը<sup>2)</sup>: Ստա-  
տիկայի մէջ, ասում է նաև, կմտնի հասարակական երեցթների  
միաժամանակեայ կապակցութեան ուսումը<sup>3)</sup> (նկատենք, որ  
խօսքը հասարակական երեցթների, և ոչ թէ մարդկանց կա-  
պակցութեան մասին է). և ահա ելակէտ ընդունելով ստա-  
տիկայի այս հասկացողութիւնը, մենք կարող ենք վերելի  
հարցին ընդհանուր պատասխան տալ<sup>4)</sup>: Ստատիկան ու-  
սումնասիրում է անշարժութեան,՝ անփոփոխութեան երե-  
ցթները, որի գործուներն են՝ կենսաբանութեան մէջ  
օրգանիկ ժառանգանութիւնը, հոգեբանութեան մէջ  
քաղաքակրթական աւանդութիւնը, հասարակագիտութեան  
մէջ ձևերի հասարակական պահպանումը (կոնսերվացիայ):  
Կենդանու մարմնի կազմւածքը, քաղաքակրթութեան տար-  
բերի փոխազարձ առնչութիւնը, հասարակական ձևերի  
փոխազգեցութիւնը ուսումնասիրում են ստատիկայում,  
որովհետեւ զեկավարում են յառուկ օրէնքներով: Օրինակ  
անհնարին է այնպիսի մի քաղաքակրթութիւն, որի տար-  
բերը չափազանց այլազան լինէին. ինչպէս որ անհնարին է մի  
հասարակական կազմակերպութիւն, որի բաղկացուցիչ տար-

1) Comte. Cours de philosophie positive. IV, (321 հրատ. 3).

2) Ibid, IV, 232.

3) Ibid, IV, 254 sq. Այս կապակցութիւնը կոնտը հասա-  
րակական միջավայրի տարրերի համերաշութիւն է կոչում (255 sq),  
consensus social, connexité (237), consensus général de l'organisme social  
(241), consensus universel de l'organisme social (242), l'harmonie sociale (251) եւ այլն. (Այսինքն հասարակական  
համաձայնութիւն, ներդաշնակութիւն):

4) Ստատիկայի եւ դինամիկայի հայեցակէտերի շատ աջող  
գործադրութիւնը քաղաքակրթութեան ուսումնասիրութեան մէջ տես:  
Строинст-ի գրում Исторія общественности (Спб. 1885).

բերը լինէին ժողովրդավար (գեմոկրատիկ) հանրապետութեւնը՝ ամբողջ ազգաբնակութեան հանրական ձայնատռութեամբ, իբաւաբանօրէն կզզիացած կաստաները և ամբողջ հողի սեփականութեան և գրամագուխների (կապիտանների) մի բռնապետի պատկանելը. ինչպէս որ անհնարին է ամբողջ մասայի կատարելապէս զիաական աշխարհայեցքի տէր լինելը միացնել՝ ներքուստ իսպառ չգաստիարակւած վայրենիների արևելան բռնակալութեան հետ. Յիւաւի, պզի ցեղական առանձնայատկութիւնների, քաղաքակըրթական տարրերի և հասարակական ձեւերի միջն որոշ փոխադրձ առնչութիւն գոյութիւն ունի: Հասարակական դինամիկան էլ իւր հերթին ուսումնասիրում է շարժման, փոփոխականութեան երևոյթները, որոնց գործոններն են անհատի շեղումները ընդհանուր տիպից ընութեան և պատմութեան մէջ: Այս շարժումն էլ պիտի որոշ օրէնքների, որոշ ասաիճանաւրութեան, այլև տեսակի յատկանիշների, քաղաքակըրթութեան տարրերի և հասարակական ձեւերի որոշ զարգայրան ենթարկելի: Կոպիտ ֆեաթշիզմից անկարեւի և անմիջապէս անցնել զիաական աշխարհայեցքութեան, հին Աթենացու նեղ հայրենասիրութիւնից—քրիստոնէական համամարդկայնութեան (կոսմոպոլիտիզմին), պարսկական պետութեան բռնակալութիւնից—Հիւս, Սմէրիկայի Նահանգների աղատութեան, հին խստապահանջ իբաւունքից—զարդացած ազգերի մեղմ օրէնքութիւններին, ստրկութեան վրայ հիմնած տնտեսական կարգից—ընկերակցութեանց սիստեմին: Այս ծալրանեղ եղբերի միջն պիտի բնական անցումներ, անհրաժեշտ աստիճաններ գոնեւն, ուրիշ խօսքով ասած՝ աշխարհայեցքութեան, բարոյականութեան, պետութեան, իբաւունքի, տնտեսական յարարելութիւնների պատմական էվոլյուցիայի օրէնքներ զոյութիւն ունին, կարծ ասած՝ հոգեկան և հասարակական զինամիկայի օրէնքներ: Հոգեկան հասարակական երևոյթները խիստ ներդաշնակութեամբ պիտի կապակցւած լինին, երբ միաժամանակ են գոյութիւն ունենում, և խստապահ յաջորդականութեամբ կատարեն ժամանակի ընթացքում, այսինքն երբ մէկը յաջորդում է միւսին:

Եթէ աշխարհիս բոլոր ազգերը մի ցեղից լինէին, ըոլորովին նման պայմաններում ապրէին, միատեսակ բազմաժարդ լինէին և ոչինչ պատահմունքների չենթարկւէին, կարող էինք հանդիսատես լինել, թէ ինչպէս զբանք կատարելապէս նման վիճակներից կատարելապէս նման եղանակով կատարելապէս նման վիճակների են անցնում: Եթէ այդպէս չէ, պատճառն այն է, որ տարբեր են այն պայմանները, որոնց մէջ գործելու են դինամիկական օրէնքները: Պատմութիւնը մի ընդհանուր արդիւնք է դինամիկական օրէնքների այլև բազմաթիւ պայմանների, որոնք այդ օրէնքների մէջ չեն պարունակւում: Վերացնելով այդ պայմանները, քաղաքակըրթութեան և հասարակական ձեւերի համեմատական-պատմական ուսումնասիրութիւնը կարողանում է մասամբ սահմանել քաղաքակըրթութեան և հասարակական կազմակերպութեան դինամիկական օրէնքները:

Պատմագլուխի համար ինարկէ առանձնապէս կարենոր է դինամիկան, բայց ստատիկան էլ անագին նշանակութիւն ունի: Հասարակութիւնը մի խիստ բարդ երևոյթ լինելով, նրա քաղաքակըրթութեան և հասարակական ձեւերի տարրերի միջն մշտական հաւասարակշռութիւն լինել չի կարող, քանի որ հասարակութիւնը՝ զանազան կողմերով մէկը միւսից առաջ անցնող դասակարգերի է բաժանուում, որով և մշտական անհամապատասխանութիւն է հկառուում, օրինակ, քաղաքական յարաբերութիւնների և տնտեսական կազմակերպութեան միջն, հասարակութեան մի մասի մտաւոր զարգացման և միւս մասի իբաւական նորմանների միջն և այլն. ստատիկայի օրէնքով պիտի մէկը միւսին համակերպւի, և ոկտում է շարժումը: Իրաւացի է լիստրէն, երբ պնդում է, թէ ուր որ զանազան անձնաւորութիւնների խմբակցութիւն կայ, այնտեղ անհրաժեշտօրէն առաջ է գտնիս հասարակութեան մի դինամիկական վիճակ, և որ ստատիկական վիճակը միւսին անասունների մէջ է հնարաւոր. ուր որ գործում է անհատական ձեւերէցութիւնը, այնտեղ յարան տեղի է ունենում հասարակական կենցաղի հին ձեւերի և քաղաքակըրթութեան հին տարբերի տապալումն:

Այդ բաւական չէ. թէ առաջ մը տարրը, որ ձեն է փոփոխութել սկսելու, կախւած կլինի արգէն մասնական պայմաններից. սրանից է, որ մի հասարակութեան կեանքը այնքան տարբեր է մի ուրիշ հասարակութեան կեանքից։ Այս պատճառով իրականութեան մէջ շեղումներ հնք տեսնում թէ քաղաքակրթութեան տարրերի փոխազարձ բնական առնչութիւնից։ Արդէն այդ օրէնքներից չէ կախված, թէ հին քաղաքակրթութեան որ տարբեր առաջնոնն է տապալւելու, թէ հասարակական որ ձեն է առաջ փոփոխուելու անհատական ձեռներէցութեամբ. այդ՝ բազմատեսակ պայմանների արդիւնք է, որոնք, զանազանակերպ տնօրինելով մարդկանց, այն ազգեցութիւնն են ունենում, որ անհատական ձեռներէցութիւնը միշտ խանգարում է էվոլյուցիայի կանոնաւորութիւնը և անհնարին է դարձնում հասարակութիւնների միակերպ հնթարկւելը ստատիկայի և դինամիկայի օրէնքերին։ Մյու խոկ պատճառով շատերին թւում է, թէ պատմութիւնը կատարում է կատարելապէս ազատ կամքով գործող մարդկանց անմիտ և անհիմն երեակայութեան համեմատ։

Կոնտը պատմութեան մէջ էվոլյուցիայի հասկացուցութիւնն է մացնում (évolution spontanée). Նրա ամբողջ փելիսոփայութիւնը պատմութեան մի ծրագրաւոր էվոլյուցիայի ձեռվ է ներկայացւած։ Մենք տեսանք, որ իրականութեան մէջ պատմութիւնը այլպիսի էվոլյուցիայ չէ եղի. ոչ միայն ազգերի ընդհարութները, այլ նաև միենոյն հասարակութեան պատմութեան տառածին գէպքերը մշտական ձըդնամամեր են, ծրագրաւոր էվոլյուցիայի մշտական խախտումներ են։ Պատմութիւնն ամբողջովին էվոլյուցիայից և ճգնաժամերից է բաղկանում. և վերջիններիս գլխաւոր պատճառը հասարակական ձեերի և քաղաքակրթութեան տարրերի փոխազարձ համապատասխանութեան ստատիկական օրէնքի խախտումն է։ Մի տարրի էվոլյուցիան, միւսների անշարժութեան գէպքում, հաւասարակշռութիւնը վերականգնելու ճգտումն է առաջ բերում, էվոլյուցիան կամ ինքը պիտի դա-

գալի, կամ թէ չէ միւսների մէջ ճգնաժամ կառաջացնի։ Կամ այսպէս էլ է պատահում, որ անհատական ձեռներէցութիւններով մէկ ուղղութիւններով։ Անգլիայում 17-րդ դարում տեղի ունեցած բարբարական յեղափոխութեան պատճառների թւում նրա պատմաբաններից մէկը, Գիգոն, տեսնում է նաև մի սոցիալական (հասարակական) պատճառ. «արդէն ամբողջ մի դար էր անցել ասում է նա, ինչ խնչոր փոփոխութիւններ էին կատարել հասարակութեան զանազան գասակարգերի յարաբարական ուժի մէջ, բայց զբանց զուգընթաց կառավարութեան մէջ համապատասխան փոփոխութիւններ չէին կատարելց, իսկ այս փոփոխութիւնները բնորոշելիս, նա միջին զանակարգի մարդկանց մասին ասում է, որ նրանք տեկի մեծացել էին, քան բարձրացել (ils avaient grandi plus, qu'ils ne s'étaient élevés), այսինքն, որ նրանց տնտեսական նշանակութիւնը այլևս չէր համապատասխանում իրենց քաղաքական դիրքին։ Յայտնի է, որ նոյնն էր 1789 թւի ֆրանսիական յեղափոխութեան պատճառներից մէկը, որին բացի զբանից միայն էր երկրի մտանոր և քաղաքական վիճակների միմեանց անհամապատասխանում լինելը։ Բնդիշական կառավարը, արդի սոցիալական (հասարակական) հարցը Արևմտեան Եւրոպայում տնտեսական կեանքի սկզբունքների գիտակցւած հակասութիւնն է քաղաքական կեանքի սկզբունքներին՝ քաղաքացիական ազատութեան և հաւասարութեան. անտեսական հասարակութեան կարգը չի համապատասխանում քաղաքական հասարակութեան կարգին։ Միւս կողմից, գիտենք, որ կրօնական վերանորոգումը, ունիքը արքային ամբողջ մասն է հասարակական յարաբերութիւնների փոփոխումն առաջանական պատճառով, նաև զուտ քաղաքական շարժութեան տարբերութեան կամ իզաւ։ Բանն այն է, որ քաղաքակրթութեան տար-

1) Guizot. Histoire de la révolution d'Angleterre. Bruxelles, 1850. I. 11 to 12.

թերը և հասարակական ձեերը նիւթականապէս իրար կապակցւած չեն. բնութեան մէջ մասը չի կարող ամբողջից անկախ շարժւել, հասարակութեան մէջ, ուր այդ նիւթական կապակցութիւնը գոյութիւն չունի, առանձին մի քանի քաղաքակրթութեան տարրերը և հասարակական ձեերը կարող են էվլիւցիայ կատարել միւսների անշարժութեան ժամանակ, որովհետև զրանց կապակցութիւնը նիւթական չէ: Բայց և այսպէս կապակցութիւն գոյութիւն ունի. այդ կապը ընդհանուր սկզբունքն է, ընդհանուր գաղափարն է, որոնք ի մի ամբողջութիւն են ամփոփում քաղաքակրթութեան առանձին տարրերը և հասարակական ձեերը սրանց էվլիւցիայի իւրաքանչիւր աստիճանի վրայ: Ստամիկայի օրէնքները պահանջում են, օրինակ, որ աշխարհայցողութիւնը ամբողջական լինի, որ, եթէ մարդկային արժանապատութիւնը ոչնչի տեղ չէ գրւում, ապա այդ սկզբունքը կիրարկւի ամեն տեղ՝ և քաղաքականութեան մէջ (բռնապետութիւն), և իրաւունքի մէջ (գաժան պատիժներ), և անտեսական կեանքում (ստրկութիւն): Արդիօք այս գաղափարը չէ Մոնտեսկիոյի ամբողջ «Օրէնքների ողու» հիմքը կազմում: Յիրաւի, այդ գիրքը հասարակական ստատիկայի մի ուսումնասիրութիւն է: Թերեւ, ստատիկան նոյն իսկ մի իւրատեսակ տրամարանութիւն լինի, քանի որ քաղաքակրթութեան տարրերի և հասարակական ձեերի կապակցութիւնը մարդու հոգեկան կողմն է. ընդհանուր առմամբ, տեեալ հասարակութեան բոլոր մնայուն գաղափարները տրամարանօրէն են միմեանց հետ կապակցւած, որովհետև նրանց կրողը մարդն է, աւելի ճիշտ՝ մարդկային միաքն է, իսկ սա գործում է տրամարանութեան օրէնքներով: Նմանապէս և հասարակական ձեերը յենւում են մարդու կողմից գիտակցօրէն թէ անգիտակցօրէն ընդունւելու վրայ. իսկ այստեղ էլ պիտի լինի իւր տրամարանութիւնը. քաղաքական, իրաւական և տնտեսական յարաբերութիւնների համար յենարան ծառայող սկզբունքները չեն կարող ակներել հակասել միմեանց, և երբ այս ծագում է, մարդը վերականգնում

է հաւասարակշուութիւնը: Նոյնը պիտի ապել նաև հասարակական գինամիկայի օրէնքների մասին. քանի որ կարող ենք օրինակ մի ժողովրդի աշխարհայցքը և բարոյականը գաղափարների վերլուծել, իսկ հասարակական ձեերը սկզբունքների վերածել, ապա ուրեմն գաղափարների և սկզբունքների էվլիւցիան չի կարող այլ կերպ կատարւել, բայց եթէ տրամարանութեան օրէնքներով:

Սակայն եթէ այս եզրակացութեան վրայ կանգ առնենք-մնանք, ապա պիտի ընդունենք, որ հասարակակիւտութեան և պատմութեան փիլիսոփայութեան մէջ լիապէս արդարացի է իդէոլոգիան: Հասարակական ստամիկայի և հասարակական գինամիկայի օրէնքները լոկ այն չափով կարող են տրամարանական կոչւել, որչափ որ վերաբերում են հասարակագիտութեան հիմքը կազմող հոգեբանութեան ըրջանին, այսինքն որչափ որ անօրինում են մարդու ներքին աշխարհի երևոյթները: Եթէ հազարաւոր տարիներ ապրող մի մարդու պատմութիւն ունենայինք՝ նրա մտաւոր զարգացման ընթացքը բոլորովին տրամարանական մի պրոցես կլինէր: Բայց անհաների հոգեկան փոխազդեցութիւնը մարդկանցից մի քանիսի կողմից միւսների աշխարհայցքի ամբողջութեան և զարգացման կանոնաւորութեան մշտական խանդարումն է. որպէսպի տրամարանութեան օրէնքները անօրինէին հասարակական ստամիկայի և գինամիկայի երևոյթները, պէտք է որ հասարակութեան բոլոր անդամները բոլորովին միատեսակ մտածէին: Այսպիսով հոգեկան փոխազդեցութեան իրողութիւնն ինքը խախտում է հասարակութեան կաղմակերպութեան և պատմութեան տրամարանականութիւնը: Միւս կողմից չմոռանակը, որ հասարակական ձեերը միայն հասարակութեան անդամների գիտակցութեան մէջ չէ որ գոյութիւն ունեն. գիտակցութիւնից դուրս էլ դրանք մշտական յարաբերութիւնների մի համակարգութիւն (սիստեմ) են ներկայանում, որը մեքենայի կամ օրգանիզմի հետ են համեմատում. չը որ այդ սիստեմը, այդ մեքենան, այդ օրգանիզմը պէտք է ատատիկայի և գինամիկայի իրենց օրէնքներն ունենան:

Եթէ հասարակութիւնը հասարակական դաշինքից (contrat social) առաջ եկած լինէր, կարող կլինէինք խօսել հասարակագիտական օրէնքների տրամարանութիւնն մասին։ Արդեօք գոյութիւն չունին հասարակութիւնների աճման, դրանց արտաքին ձևերի զարգացման և այլն օրէնքներ։ Զէ որ այս բոլորը իրողութիւններ են, որոնք անկախ են սկզբանաքային պրոցեսներից։ Զէ որ պիտի գոյութիւն ունինան նաև, այսպէս ասած, հասարակական ճարտարապետութեան օրէնքներ, հասարակական ձևերի տարրերի ստատիկայութիւնը միայն դադարիարների և սկզբանքների յաջորդական փոփոխութիւն չէ, այլ նաև հաստառութիւնների, բառիս ընդարձակ ի հաստավ, հաստառութիւնները կարող են նմանօրինակ լինել, իսկ նրանց սկզբանքները տարբեր նմանօրինակ սկզբանքներ կարող են տարբեր հաստատութիւնների հիմքը լինել։ Հաստառութիւնների զարգացման ընթացքը գաղափարների զարգացման ընթացքին չի նոյնանում, մի խոշոր պետութիւն աւելի բարդ կլինի քան մի փոքրը, բայց երկուսի հիմքն էլ կարող է միևնույն սկզբանքը լինել։ Զինաստանը և Ֆրանսիան մեծ և բարդ պետութիւններ են, բայց դրանց սկզբանքները տարբեր են, ինչպէս որ տարբեր են մանր և սակաւ բարդ հասարակական միութիւնների սկզբանքները, ինչպիսի են, օրինակ, հին Աթէնքը և այժմեան Չերնոգորիան։ Խողբի այս կողմն աչքի առաջ ունի Սպենսերը «հասարակագլուխեան հիմունքներում»։ Նա, օրինակ, ասում է հասարակական աճման մասին, «հասարակութիւնները, կենդանի էակների նման, սկիզբն են առնում սաղմերից, այսինքն իրենց սկիզբն են առնում այնպիսի հաւաքագլուխերից, որոնց մեծութիւնը խիստ չնշին է՝ համեմատած այն մեծութեան հետ, որին նրանք համառմ են յետագյում։ Ամբողջացման, ձուլման (ինտեգրացիայ) ուղղակի և անուղղակի պրոցեսը ժամանակակի պետութիւնը միամատարական օրգանական ամամախմբումներ (ազգեկաններ), որոնք իրենց ընդարձակութեամբ միլիոնաւոր անդամ գերազանցում են հասարակական այն մանր համախմբումները (ազգեկատ)։

որոնք միակն էին մարդկային պատմութեան ամենահեռաւոր ժամանակներում գոյութիւն ունեցող»<sup>1)</sup>։ Բայց աւելացնաք մեր կողմից, որ խոշոր համախմբումը (ազգեկատ) կարող է նոյն սկզբանքի վրայ յենւել ինչ որ փոքրը, կարող է գոյութիւն ունենալ մի բանակալական պիտութիւն իրաւական անիրաւահաւասարութեան և անտեսական ստրկութեան կարգերով, մի քանի համայնքներից և ընդարձակ երկրից բաղկացած։ Ընդհակառակը, մի փոքրիկ համայնքը առանց քանակով բաղմանալու և առանց ուրիշների հետ մի աւելի ընդարձակ քաղաքական մարմնի մէջ միաձուլելու, կարող է անցնել ազատ պետութեան ձևերի անդամների քաղաքացիական հաւասարութեան և բնակչութեան անտեսական անկախութեան կարգերով։ Սպենսերը խօսում է նաև հասարակութեան կազմակերպութեան մասին, զանելով որ ընդհանուր մասայի աճմանը ուղեկցում է սովորաբար կազմակերպութեան բարգացման աճումը։ Զարդացման սկզբնական յատկանիշը հանդիսացող այն միաձուլմանը (ինտեգրացիայ) զուղընթաց՝ բարձր աստիճանի վրայ երևան է գալիս զարգացման նաև երկրորդ աստիճանի յատկանիշը, որը զիֆերենցիացիան է (ճիւղաւորում)<sup>2)</sup>։ Բայց այստեղ գործեալ տեսնում ենք, որ չեն համապատասխանում իրար սկզբանքի դիմերենցիացիան և էվոլյուցիան։ միջնադարեան փետպական սիստեմը հասարակութեան մի շատ բարդ յօրինածք է, բայց նրա սկզբանքները հնարաւոր են նաև վերին աստիճանի պարզ ձևերի գէպբում։ կաստայաւոր չնդկաստանը և Հիւս.Ամերիկայի նահանգները շատ բարդ

1) Спенсеръ. Основания Социологии, II. 515. Մենք այս տեղ չենք քննադատում Սպենսերի պարավելիզմը՝ բայց կարեւոր այն է, որ նա ընդունում է «փերորգանական աճման այնպիսի մի էականակ, որը ոչնչ նմանութիւն չունի օրգանական աճման հետ։ այդ՝ գաղթան միջոցով անեն է, կամ միաւորների՝ մի հասարակութիւնից միւսին անցնելու միջոցով»։ Իեւ, II, 522։ Այս երեսոյթը մի հետեւանիք է հասարակութեան դիմերեալութեան։

2) Իեւ, II, 523.

սիստեմներ են, բայց դրանց սկզբունքները տարրեր են: Անա թէ ինչն մենք խստիւ տարրերում ենք էվոլյուցիայի և առաջադիմութեան (պառզեսի) հասկացողութիւնները. էվոլյուցիան ձևերի զարգացում է, իսկ առաջադիմութիւնը սկզբունքը, էութեան, գաղափարի զարգացումն է: Այդ երկու իրուղութիւնները միևնույն բանը չեն. դրանցից մէկը օրիեկտիւ դիտողութեան մի իրողութիւն է, միւսը՝ ուուրյեկտիւ գնահատման մի իրողութիւն: Հասարակական էվոլյուցիան ձևերի ինտեգրացիայի (համախմբման) և դիֆերենցիացիայի (շերտաւորման) մի պլրոցն է. հասարակական առաջադիմութիւնը այդ ձևերի մէջ բարձրագոյն սկզբունքների մարմնացման պլրոցեն է:

Այսպէս ուրեմն, ահա թէ ինչն է պատմական պլրոցենի էութիւնը: Հասարակութեան գործունէութիւնը կատարւում է որոշ վերօրդանական միջավայրում (քաղաքակրթութեան և հասարակական կազմակերպութեան մէջ), և այս միջավայրի էվոլյուցիան պլրոցենի մի կողմն է կազմում: Միւս կողմը՝ այդ էվոլյուցիայի վրայ ներգործող անհատ-ների գործառնութիւնն է հանդիսանում: Այս մէկը, երկրորդ, քանի որ հասարակութիւնը զանազան անձերից է բաղկացած, ապա սրանցից իւրաքանչիւրը ուրոցն ձեռվ է ներգործում վերօբգանական միջավայրի շարժման վրայ, որը և ոչ թէ ուղիղ, այլ անկանոն զծով է ընթանում. իսկ որովհետեւ հէնց ինքը այս միջավայրը իւր ձևերի մէջ բաղմանաթիւ տարրերի է բաժանուեմ, անձնուորութիւնների ներգործութիւնը միատեսակ չէ ազգում առանձին տարրերի էվոլյուցիայի վրայ, և վերջիններս մէկը միւսից առաջ հնանցում: Երբորդ, քանի որ տարրերի միջն պիտի հաւասարակշութիւն լինի, ապա ինքնըստինքեան հասկանալի է, որ անհատների կողմից դրանց վրայ գործելիք ազգեցութեան անհամաչափութիւնից, այլ և իրենց իսկ սեփական ընթացքի անհամաչափութիւնից, տարրերի միջն անհամապատասխանութիւն է առաջ գալիս, որը պիտի վերացը, անհամապատասխանութեան այդ գրացումը կատարվում է տար-րերի մէկի միւսի վրայ փոխադարձ ներգործելով, որ և

մշտական ճգնաժամներ է առաջ բերում, այսինքն կամ էվոլյուցիայի դադար առաջացնում, կամ նրան դէպի մի ուրիշ կողմ ուղղում, բայց յամենայն դէպս քաղաքակրթութեան և հասարակական կազմակերպութեան մէջ փոփոխութիւն է կատարվում: Այսպիսով պատմութեան մեքանիզմը անձնաւորութիւնների և վերօրգանական միջավայրի փոխանական միջավայրի գարձակութեան է վերածւում, մարդկանց՝ միջավայրի գաղեցութեամբ կատարւող փոխազդեցութեան միմեանց վերաբերմամբ և միջավայրի տարրերի փոխազդեցութեան մարդու գործունէութեան ազգեցութեամբ: Վերցնենք այսպիսի համարկական կազմակերպութիւն, որի էվոլյուցիան ամբողջը համարմելն և մասեւը շերտաւորման (դիֆերենցիացիայի): Ինթարկելն է հանդիսանում, և միաժամանակ առաջ է զարդարկելն է հանդիսանում, և մարդամանակ առաջ մասաւոր գործունէութիւն, որը անձնական անհատակալիս մտաւոր կազմակեցութեան էվոլյուցիայ է հանդիսանում. մի առժամանակ երկրորդ պլրոցենը յետ է մնում առաջնից, լայց ահա հանդէս են գալիս անհատական զարգացմանը որևէ պայմաններ, և ճգնաժամը անխուցուած արագացնող որևէ պայմանները կարող են սափելի է գատնում: Կոր հասկացութիւնները կարող են գանձեւ, որ առաջին էվոլյուցիան անձնաւորութիւննը ամբողջին հնաթարկելիս և սրանց միջն զբագլունքները բաժանելիս չափազմնց հեռու է գնացել: Այդ պատմասով գաղափարները և հաստատութիւնները պիտի համապատասխանութեան բերեն, և ահա մէկը էվոլյուցիաներից ճգնաժամի է ենթարկում, այսինքն՝ կամ գաղափարների ազգեցութեան տակ հիմնովին փոխակերպում են հաստատութիւնները, տակ հիմնովին փոխակերպում են հասակամ առաջ անցած գաղափարները ոչնչանում են, և հասակամ առաջ անցած գաղափարների մտաւոր վիճակը յետ է պահնում դէպի էվոլյուցիայի նախկին շրջանը: Մենք այսուղի վերցրինք միայն ճգնահերկու պլրոցեն և դրանց փոխազդեցութիւննը միայն ճգնաժամի վայրկեաններ: Իրապէս, հասարակութեան կեանքում բարձրաթիւ առանձին էվոլյուցիաներ են կատարում, որոնք յարաւե փոխազդեցութեան մէջ և ճգնաժամի մշտական պատական պլրոցենը, այս պատական պլրոցենի տակ են գտնում: Պատմական պլրոցենը, այս

պիսով, հասարակութեան գործունէութեամբ կտտարւող՝ վերօրգանական միջավայրի մի էվոլիւցիայ է հանդիսանում, որը խանգարում է մշտական մասնական և ընդհանուր ճգնաժամերի կողմից և նոյն այդ էվոլիւցիան առաջբերող գործունէութեան խոկ պայմաններից մէկն է:

Ինձ կարող են առարկել, որ ճգնաժամեր ընդունելով ես հէսց ոչնչացնում եմ էվոլիւցիայի նոյն ինքն գաղափարը. բայց իմ հայեացը առանձնայտութիւնն այն է, որ ես պատմութեան ներկայացրած ընդհանուր էվոլիւցիան մասնակի էվոլիւցիաների եմ վիրուծում. Այդ պահանջում էին զիտական վերլուծումն ընդհանրապէս, խոկ մասնականապէս պատմութեան մէջ բաղմաթիւ խճճւած պատճառական շղթայակցութիւնների գոյութիւն ունենալը, իւրաքանչիւր պատճառական շարժման բարդ լինելը, որը տարրական պլոցեաների ամբողջութիւնից է բարկացած, քաղաքակըրթութեան՝ առանձին տարրերի բաժանուած լինելը, որոնցից իւրաքանչիւրը իւր էվոլիւցիան ունի և տարրերից մի քանիսը կարող են միւսներին չհամապատասխանել, և պրոցընկի ձգտումը (տեսդեմ) մի քանի առանձին տեսնդենցների բաժանելու անհրաժեշտութիւնը: Ընդհանուր էվոլիւցիան մասնականների բաժանելով ես ասլա պնդում եմ, որ մէկ մասնական էվոլիւցիայի կողմից միւսի խախտելը ճգնաժամ է առաջ բերում (կրիպտո): Այս բանին նմանօրինակ է անհրաժեշտութեան և պատճառականութեան յարաբերութիւնը. իրականութեան ամբողջութեան ընդհանուր անհրաժեշտութիւնը (երեսյթաբանական) կարելի է մասնական անհրաժեշտութիւնների, այսինքն առանձին պատճառական շարքերի՝ վիրուծել, և պատճառական մի շարքի՝ իրենից անկախ մի ուրիշ շարքի հանդիպելը, պատճառականութիւն է առաջացնում: Ճգնաժամի գաղափարը նոյնպէս չի հակառակ էվոլիւցիայի գաղափարին, ինչպէս որ պատճառականութեան գաղափարը չի հակառակ անհրաժեշտութեան մասնական անհրաժեշտութեան գաղափարին, ամեն պատճառականութիւն մասնական անհրաժեշտութիւնների հանդիպման արդիւնք է, ամեն ճգնաժամ մի մասնակի էվոլիւցիայի միւսի վրայով առաջարկութեան գործոնների դէմ: Բայց հէսց ամբողջ պատճառական պլոցեալը, որի մի մասնական տեսակը առաջադիմութիւն ենք անւանում, բաղկացած է հասարակութիւնը առաջ կամ յետ մզող, այսինքն յետաղիմական կամ առաջադիմական, պատճառական իրողութիւնների, այլ որպէս պատճառական առաջադիմութեան գործոնների դէմ: Բայց հէսց ամբողջ պատճառական պլոցեալը, որի մի մասնական տեսակը առաջադիմութիւն ենք անւանում, բաղկացած է հասարակութիւնը առաջ կամ յետ մզող, այսինքն յետաղիմական կամ առաջադիմական, պատճառական իրողութիւններից էվոլիւցիան ունի մարդու զանազան գործունէութիւններին համապատասխան, աշխարհայեցողութեան էվոլիւցիան շըտակայ աշխարհայեցողութեան էվոլիւցիան շըտակայ աշխարհը աստիճանաբար իմանալն է, բարոյականի էվո-

ծելու արգիւնք է: Ընդհանրապէս պատմութիւնն իհարկէ էվոլիւցիայ. է բայց մասնականութիւնների կողմից գործի վրայ այլ կերպ կարելի է նայել: Այսպիսով պատմութեան մասնական ճգնաժամերը (կրիպտո) պատճառական ընդհանուր էվոլիւցիայի ամբողջութեան բաղկացուցիչ (ինտեգրալ) տարրերն են կազմում, այդ պատճառով էլ ճգնաժամի իմ հասկացողութիւնը հիմնած է ընդհանուր էվոլիւցիան մասնական էվոլիւցիաների բաժանելու վրայ: Քանի որ մատնանշւած բաժանումը հնարաւոր է կտտարկել ապա անհրաժեշտ է ընդունել, որ մի մասնական էվոլիւցիայ կարող է խանգարել միւսը և այսպիսով ճգնաժամ առաջացնել: Ճգնաժամը, այսինքն յանկարծակի յեղաշրջումը, էվոլիւցիային, այսինքն աստիճանական և յաջորդական զարգացմանը, հակադիր մի բան է, առկայնամեն մի ճգնաժամ լոկ յարաբերաբար է: Նա չի բղխում մի էվոլիւցիայից, եթէ իրեն չի խանգարում մի ուրիշ էվոլիւցիայ, քանի որ կարող ենք խօսել ոչ միայն մէկ ընդհանուր էվոլիւցիայի, այլնաև շատ մատնական էվոլիւցիաների մասին՝ որպէս առաջինի բաղադրէչ մասերի: Նշանակում է, ամբողջ բանն այն է, որ ընդունելով գիտութեան իրաւունքը այսպիսի մի անալիզ անելու, ես ընդունում եմ, որ նա իրաւունք ունի խօսելու համեմ ճգնաժամերի մասին, առանց ընդհանրապէս էվոլիւցիայի գաղափարին հակառակութիւնը կամ ուղղել ճգնաժամերի լու: Ճիշտ է, առարկութիւնը կարող են ուղղել ճգնաժամերի դէմ: Ոչ ոչ թէ որպէս պատճառական իրողութիւնների, այլ որպէս պատճառական առաջադիմութեան գործոնների դէմ: Բայց հէսց ամբողջ պատճառական պլոցեալը, որի մի մասնական տեսակը առաջադիմութիւն ենք անւանում, բաղկացած է հասարակութիւնը առաջ կամ յետ մզող, այսինքն յետաղիմական կամ առաջադիմական, պատճառական իրողութիւններից էվոլիւցիան էվոլիւցիան բաժանելով կարող ենք ասել, որ քաղաքակըրթութեան հինգ զլիաւոր տարրերից իւրաքանչիւրը իւր էվոլիւցիան ունի մարդու զանազան գործունէութիւններին համապատասխան, աշխարհայեցողութեան էվոլիւցիան շըտակայ աշխարհը աստիճանաբար իմանալն է, բարոյականի էվո-

մեցիան իդէալների աստիճանական ստեղծագործութիւնն է. քաղաքական կազմակերպութեան էվոլյուցիան հասարակութիւնը մէկ իշխանութեան ենթարկելու և առանձին գասակարգերի բաժանելու գործունէութիւնն է. իրաւական կարգաւորման էվոլյուցիան շահերը կազմակերպւած պաշտամնելու միջոցների աստիճանական ստեղծագործումն է. իրաւական գործակցութեան էվոլյուցիան հասարակական ուժերի աստիճանական միջոցումն է կեանքի սիրթական միջոցներ ձեռք բերելու նպատակով: Եթի այս կամ այն էվոլյուցիան մարդուն բարիք և ոչ թէ չարիք է բերում (ինչ պէս որ չարիք է սուս գաղտնիարի էվոլյուցիան, սխալ իդէալի էվոլյուցիան, բանակալական և կաստայական պետութիւն էվոլյուցիան, անարդար շահերի պաշտպանութեան բիրտ միջոցների էվոլյուցիան, առանց արդար բաժանելու գործակցութեան էվոլյուցիան), այդ առաջադիմութիւնն է: Իրաքանչիւր էվոլյուցիայի համաժամանակեայ արդիւնքները փոխարձարար ներդաշնակ են լինում, այդ՝ ստատիկայի օրէնքու ուստինաբրելիք ներդաշնակութիւնը անպատճառ ներդաշնակութիւն չէ սուրբյեկտիւ (ենթակայական) տեսակէտից: Հասարակական ստատիկայի առարկայօրէն (օրյեկտիւ) ուստինաբրելիք ներդաշնակութիւնը անպատճառ ներդաշնակութիւն չէ սուրբյեկտիւ (ենթակայական) տեսակէտից: Հարդիկ սաջմների քաղաքական բանապետութիւնը, կաստատական իրաւական անիրաւահաւասարութիւնը, մասաների անտեսական ստրկացումը Հնգկատանում շատ ներդաշնակ կերպավ միացած են մի ամբողջութեան մէջ, բայց այստեղ մարդկային տեսակէտից ներդաշնակութիւն գոյութիւն չունի: Եւ այսպիսի հասարակութեան երկարան հաստատուն մնաւուց չի կարելի եղբակացնել նրա կատարելութեան մասին: Ընդհակառակը մի յևտամնաց հասարակութիւն որչափ անհայտն լինի, այնքան աւելի հնարաւորութիւն կայ, որ նուածաղիմէ:

Ինչ վերաբերում է անձնաւորութիւնների գործունէութեան՝ իւրարդիւնքներին կատամար նա լինում է կամ անդիշուակից, այսպէս ասած տարերային և ինքնարերարար (քունակութան) կամ գիտակցական, դիտաւորեալ: Առաջնի այնպիսի առդիւնքներ, ինչպիսին են դիցարանութիւնը, ժողովրդական

լանաստեղծութիւնը, հասարակութեան նախնական ձեւերը, սովորոյթի իրաւունքը և այլն, առանձնապէս բնական էվոլյուցիայի օրինակներ են ներկայացնում, բայց գիտակցական գործունէութիւնն արդէն մարզու կողմից իւր պատմութեան տնօրինումն է՝ վերօրգանական միջավայրի տարրերը համապատասխան կերպով համախմբելու միջոցով: Նախ քան գիտակցական գործունէութիւնն ակզրաւորութիւնը, որը գէպի իրերի աւելալ կարգը և ընդհանուրից ճանաչւած կարծիքները քննադատաբար վերաբերելու վրայ է հիմնւած, հասարակութիւնը, այսպէս սասած, ինչպէս մի մեքանիզմ և օրգանիզմ է մնում, բայց այսուղ հէնց իրեն մեքանիզմի մէջ մի մեքանավար է երկան զալիս, որը փոփախում է այն իւր կարիքների համաձայն, հէնց իրեն օրգանիզմի մէջ մի գործօն է երեան գալիս, որը նրա կազմւածքը յարմարեցնում է իւր կարեքներին, ինչպէս որ անսանւրոյցը կամ պարտիզանը արհեստական լընարութեամբ անսանւների նոր տեսակները կամ բոյսերի նոր ձեռք է ստեղծում, մի խօսքով, մի արևետաւոր է հանգիս գալիս, որը իրականութեան մէջ եղած նիւթից արւետի մի կերտածք է ստեղծագործում: Հէնց այսպիսի բնոյթ են կը ում այն քաղաքակրթական տարրերն ու հասարակական ձևերը, որոնց մարդկանց անդիմական կողմէ գործունէութիւն բնական արդիւնքներից տարրերելու համար՝ երբեմն արհեստական ենք անւանում. Վեդաների կամ Հոմերեան երգերի դիցարանութիւնը և Բրահմանականութիւնը կամ Նոր-Պատմոնականութիւնը, ոռուսաց ժողովրդական երգերը և Պուշկինի բանաստեղծութիւնը, հին Աթենաց անցոց ցեղական կենցաղը և Սոլոնի ու Կլիսթենէսի սահմանադրութիւնները, հին հոոմայքոց սովորոյթի իրաւունքի և Corpus juris civilis-ը, նախնական հողատիրական համայնքը և նորագոյն բանառուական միութիւնը՝ ան մարդկանց անգիտակից և գիտակցական գործունէութեան արդիւնքների օրինակներ: Զենք առում, թէ վերջնը անպատճառ տարածում է, և որ առաջնը առաջադիմութիւն չի կատարում. Հոմերեան դիցարանութիւնը, հին Արիացոց հողատիրական համայնքը առաջադիմութիւն և ամենամասամաս վայ-

ըենու կոպիտ Փետիշիզմի հետ կամ նախնական մարդկանց պատահական խուժանի հետ, որոնք ամեն անգամ որս բաժանելիս կարող էին իրար ծեծել: Միւս կողմից, եղթաները գիտակցորչն ցածացնում էին հասարակութեան մտաւոր զարգացման աստիճանը, անգլիական լորդերը գիտակցորչն հողագործի էին անում ժողովրդական մասան: Պատմութեան ընդհանուր ընթացքում անձնաւորութիւնների գիտակցական գործունէութիւնը առաջնակարգ դեր կատարող չէ, և առաջադիմութեան կամ յիտագիմութեան նպաստող ջանքերը անհամաների այնպէս են չեզոքացւում, որ պատմութիւնը, ընդհանրապէս դիտւած, մի ահապին, բայց վերին աստիճանի բարդ էվոլյուցիայ է ներկայացնում, որի վերաբերմամբ բոլոր ճնաժամերը նոյն բանն են, ինչ որ երկրագնդի վերաբերմամբ ահապին լեռներն են, որոնք չեն խախտում երկրի գնդաձեռութիւնը: Այս էվոլյուցիայի մէջ կարող ենք երկու զուգահեռական հոսանք, երկու գլխաւոր էվոլյուցիայ, երկու տարրեր գինամիկական պրոցես տարբերել: Մի պրոցեսը գաղափարների և սկզբունքների արամարտական զարգացումն է, և հէնց այս էր որ զիլաւորապէս աչքի առաջ ուներ պատմութեան իդէլիստիկ վիլիսոփայութիւնը, միւս պրոցեսը արտաքին ձևերի զարգացման պրոցեսն է, որը յատկապէս զրաւել էր Սպենսերի ուշադրութիւնը սրա «Հասարակագիտւրեան» մէջ:

Հոգեոր քաղաքակրթութեան և հասարակական կազմակերպութեան էվոլյուցիայի պրոցեսները մշտական փոխազդեցութեան մէջ են գտնուում: Հասարակական ձևերը գորել են, եթէ ընդունում են հասարակութեան մէջ արապետող գաղափարների կողմից, և իրենք էլ հասարակութեան մէջ գաղափարների առաջ գալու և զարգանալու պայմաններ են: Որովհետեւ քաղաքակրթութեան շարժման վրայ արացողում է հասարակութեան կազմակերպութիւնը և որովհետեւ հասարակական ձևերի փոփոխման վրայ արէվոլյուցիան գուտ արամարտական պրոցես լինել չի կարող, ինչպէս և հասարակական էվոլյուցիան զուտ արամարտական պրոցես լինել չի կարող, մէկը ձևագործութեան մէջ գուտ արամարտական պրոցես լինել չի կարող, առաջ առաջ պրոցեսի աւելի ճշգրիտ սահմանումը տալ, ամենից առաջ որոշելով նրա տարրերութիւնը էվոլյուցիայի գաղափարից: <sup>1)</sup>

զարգացման պրոցես լինել: Առաջինը միայն մօտենում է անհատական մտածողութեան օրէնքներին, ինչպէս որ երկրորդը միայն մօտենում է օրգանական զարգացման օրէնքներին: Այսպիսով որոշ չափով արդարանուում են պատմութեան մէջ տրամարանական պրոցես (Հեղելը) և օրգանական պրոցես (Սպենսերը) տեսնող մտածողները. տրամարանութիւնը և օրգանական տեսութիւնը միայն միասին վեցցւած կարող են մեզ օգնել պարզելու պատմութեան մեքանիզմը: Վերօրգանական զարգացման էութիւնն էլ հէնց այն է, որ նրա մէջ օրգանական զարգացումը մի ուրիշ բանի է փոխակերպում տրամարանական պրոցեսի միջոցով. առանց հոգեկան էվոլյուցիայի հասարակական էվոլյուցիան, երեխ, Սպենսերի մատնանշած շաւզով ընթանալիս կլինէր: Հասարակական կազմակերպութեան մէջ մասերը մի նոր շաղկապով են կապակցւած քան օրգանիզմի մասերը. առանց հոգեկան կապակցութեան հասարակութիւն գոյութիւն չէր ունենալ. բայց որովհետեւ մարդկէ միմեանց հետ այլ կերպ չեն կարող կապակցւել, հասարակութեան էվոլյուցիան, որը եթէ ուզում էք, իւր տեսակի մի օրգանիզմ է, անհնար է առանց հոգեկան էվոլյուցիայի, իսկ սա էլ իւր հերթին անհնար է դարձնում հասարակութեան էվոլյուցիան կենսարանական օրգանիզմի նմանօրինակութեամբ: Այս բանի պատճառը հասարակութեան գիսլը ետութիւնն է, այլև այն, որ հասարակութեան փոփոխումները կատարում են անձնաւորութիւնների հոգեկան գործունէութեան միջոցով, որը աւելի և աւելի գիտական-նպատակայարմար է գառնում:

Բայց վերջապէս ժամանակն է առաջադիմութեան զարգափարի աւելի ճշգրիտ սահմանումը տալ, ամենից առաջ որոշելով նրա տարրերութիւնը էվոլյուցիայի գաղափարից: <sup>1)</sup>

1) Էվոլյուցիայի եւ առաջադիմութեան զարգափարների յարաբերութեամբ շատ քիչ են զբարելը Caro-ն «Le progrès social» յօդածում (R. d. d. M. 1873, 15 oct.) զտնում է, որ էվոլյուցիայի զարգափարը միայն աւելի ընդհանուր

Ներկայումս այդ երկու տերմինները շատ հասարակագէտական են (սոցիոլոգներ) նոյնացնում են, <sup>2)</sup> սակայն ուրիշ սոցիոլոգներ այս նոյնացումը սխալ են համարում; 5) Մենք վերջին հայեացքին ենք, և առաջ թէ ինչնւ: Նախ, էվոլյուցիան զուտ օբյեկտիւ դիառղութեան մի իրողութիւն է, մինչդեռ առաջադիմութեան զաղափարը սուբյեկտիւ գնահատման արդիւնք է, ամեն մի էվոլյուցիայ առաջադիմական չպիտի համարենք այն պարզ պատճառով, որ այնպիսի «զարգա-

(երես 764) եւ որ այս պատճառով Սպենսերի մօտ առաջադիմութեան զաղափարը չքանում է, ինչպէս մի կաթիլ էվոլյուցիայի ծովոմ (770 երես): Պրուդոնը նոյնպէս նկատում է, որ առաջադիմութիւնը էվոլյուցիայ չէ (De la justice. III, 5), ինչպէս եւ Bouillier-ը (Moralité et progrès, P. 1875. երես 12 Տ. 18 Տ.): Բայց իւրաքանչիւրը առաջադիմութիւնը եւ էվոլյուցիան իւր տեսակի է սահմանում: որով եւ դրանց յարաբերութիւնը տարրիք կերպով է հասկանում: Մենք անձնապէս իրեն ելակէտ ընդունում ենք ՈՒրոյի տնած տարրերութիւնը, առանց դիպէլու այ և նեղինակի կողմից շօշափնած՝ առաջադիմութիւն զաղափարի դիտական ՈՒ ոչդիտական լինելու հարցին: Աստ ՈՒրոյի «աւելի ճշգրիտ եւ աւելի լայն մի տեսակէտ հնարաւորութիւնը է տախու հասկանալու, որ մարդկային առաջադիմութիւնը ընդհանուր առաջադիմութեան մի մասն է միայն, եւ այս երկիրու բանը էվոլյուցիայ կամ զարդացում աւելի յարաք տերմինով փոխարինելու: Այս փոխարինումը մեծ կարևորութիւն ունի. որպինտեւ մարդկային սուբյեկտիւ եւ ենթազրական մի կարծիքի փոխարէն գնում է մի տիեզերական, օրյեկտիւ եւ դիտական փարզապետութիւն»: (L'hérité. P. 1873. Էջ 396): Ես իսկապէս առաջադիմութեան զաղափարն եմ պաշտպանում: որպինտեւ պաշտպանում եմ մարդկային հայեցակիւրը, որը ՈՒրոն, զիւտեմ ինչու, հակափառական է համարում ասելով: «ամեն բանում մարդու յատուկ մի հակագիտական ցնորդով մենք առաջադիմութիւնը նկատում ենք միայն մարդկային տեսակէտից»: (Նոյնտեղ. 595): Այս կողմից ես տարակարծիք եմ ՈՒրոյի նետ: Մի ուրիշ գրածքում նա այսպէս ասում է: «Առաջադիմութիւնը բառին ընդհանրապէս կապւած զաղափարը ոչ միայն տար-

ցումներ» են լինում, որոնք խոչընդուռ են հանդիսանում կամ կանգնեցնում են պատմութեան առաջադիմական ընթացքը: Վերցնենք, օրինակի համար, միջնադարեան կաթոլիկականութեան էվոլյուցիան, որը ուզզակի ձգտում էր աստւածպետութեան որպէս մի քաղաքաքական սկզբունքի՝ սրա բարոր հետեանքը ներով հոգեւոր և հասարակական կեանքի համար. կարող ենք աստիճանաբար հետամուս լինել այդ էվոլյուցիային, բայց չենք կարող ասել, որ նրա ձգտումը (տեսնենցը) համապատասխան է եղել մտաւոր, բարոյական և հասարակական առաջադիմութեան տեսնենցի հետ: Երկրորդ էվոլյուցիայի գաղափարը հաւասարազօր է աստիճանականութեան և յաջորդականութեան գաղափարին և այս մտքով հակագրում է յանկարծակի յեղաշրջումներին, որոնք, ինչպէս ասում են, ընդհատում են իրերի բնական ընթացքը, այսինքն էվոլյուցիան հակադրում է ճգնաժամ ասածին բառիս ամենաընդարձակ առումով: Առաջադիմութիւնն ու յետագիմութիւնը միայն էվոլյուցիաների միջոցով չեն իրականանում, այլ նաև ճգնաժամերի միջոցով. այն ճգնաժամն առաջադիմական կանւանենք, որը ընդհատում է յետագիմութիւն էվոլյուցիան,

տամ է, այլ նաև սխալ. Առաջադիմութիւնը բատ ինքեան շփոթում են դրան ուղեկից բանի հետ, մարդկանց համար բերած նրա օգուտների եւ նպաստարոր արդիւնքների հետ: Այս զործողութիւնը սաւերը իրականութեան տեղ է ընդունում (sic!): Կաւ հասկանալու համար. Ու ի՞նչ է առաջադիմութիւնը, պէտք է որոնել անկախ մեր սեփական օգուտից, Ու ի՞նչ է դրան առաջացնող փոփոխութիւնների բնութիւնը»: (La psychologie anglaise. 169): Սակայն մէկը միւսին չի խանդարում:

2) Տես. օրինակ Fouillée. La science sociale, երես 184—194.

5) Renouvier, Critique philosophique, 29 Janvier 1888. Սպենսերի մասին Կառու ծիշտ նկատում է՝ «Նրա համար ինդիքն այլիւս մարդկային եւ հասարակական հասկացողութեան մասին չէ, որը իրեւ ելակէտ է ծառայել իր հետափուզումների համար» (Le progrès social, 714):

և յետադիմականն կանւաննենք այն, որն ընդհատում է առաջադիմականն էվոլյուցիան։ Ամբողջ պատմութիւնը միաժամանակեայ և յաջորդականն էվոլյուցիաների ու ճգնաժամերի մի հասպիս ամբողջութիւն է, և պատմութեան վիլխոփայի խնդիրն է՝ երեսյթների այդ բազմազանութեան մէջ առաջադիմութեան վիճակին հետամուտ լինել՝ իրականանալիս թէ արգելելիս լինի նա այս բոլոր էվոլյուցիաների և ճգնաժամերի միջոցով։ Երբորդ, հոգեկանն և հասարակականն էվոլյուցիան տնօրինող օրէնքներն իմանալու համար գեռ կարելի է ուսումնասիրել և գասաւորել զանազան ազգերի կեանքի պատմական իրողութիւնները նոյն այս իրողութիւնները համեմատելով, բայց առաջադիմութեանը բանաձև (փորմուլայ) յօրինելու համար պիտի աչքի առաջ մի իդէալ ունենանք, որի հէնց աստիճանական իրականացումը մասնականն էվոլյուցիաների շնորհիւ կամ սրանց հակառակ առաջադիմութիւն ենք անուանում։ Էվոլյուցիայի օրէնքները թերևս կարող կլինենք զանել հասարակական իրողութիւնների ուսումնասիրութեան այն մեթօդի լայն գործադրութեամբ, որը, օրինակ, կիրասից համեմատաբար մի փոքր շրջանում ֆրիմանը իր «Համեմատական բաղաբազիտութեան»<sup>1)</sup> մէջ, բայց առաջադիմութեան բանաձև կարող ենք միայն արիոր մշակել, մի որոշ իդէալ մեզ համար ծրագրելով և ցոյց տալով, թէ մտքի և կեանքի շրջանում մասնական էվոլյուցիաների ինչպիսի շաղկապուտն կարող է տանել դէպի այդ իդէալի իրականացումը։ Այս պատճառով առաջադիմութեան բանաձևը անպատճառ սուրյեկտիւ-ալլրիօրի է լինելու, այլ բան է իրողութիւններ գիտելը, այլ բան է զրանց գնահատելը։ այլ բան է երեսյթների օրէնքները հատազոտել, այլ բան է այնպէս շաղկապի այդ օրէնքներն, որ մեզ համար բացարւի առաջադիմութիւն համարւածի հնարաւորութիւնը։

1) Ֆրիմանը ուղղակի իր «Համեմատական բաղաբազիտութեան» մէջ մատնաշում է հասարակագիտութեան (սոցիոգիայի) նպատակը, թէեւ վերջին անունը նրան դիւր չէ գալիս։ Ծանոթ. քունակական 10 Տ. 222.

Վերօրգանական միջավայրի էվոլյուցիայի օրէնքների ուսումնասիրութիւնը և առաջադիմութիւնն բանաձևի մշակումը, այսպիսով, երկու տարբեր խնդիրներ են, առաջինները ձեռք են բերւում դարձեալ առօրին, ինդուկցիայի և զուտ օրյեկտիւ մեթօդի միջոցով։<sup>1)</sup> սակայն երկրորդը չի կարող այլ կերպ ուրոշւել, բայց եթէ արիօր, մարդկութեան կիանքի մասին մեր ունեցած իդէալի համեմատ, որը մի սուբյեկտիւ բան է և գեղուկցիայի ելակէտ է ծառայում։



1) Մեր իսկական նպատակի համար, ասում է Ֆրիմանը, պիտի մեր միտքը այնպիս տրամադրենք, որպէսպի բաղաբական պիտի մեր միտքը այնպիս տրամադրենք, որպէսպի բաղաբական միտքը միտքիտութիւնից ժողովրդապիտութեան եւ ժողովրդապիտութիւնից միտքիտութեան անցնելը, նոյնքան քիչ բարոյական պիտութիւնից միտքիտութեան անցնելը, նոյնքան քիչ բարոյական գնահատման ենթարկելիք համարի, ինչպէս լատիներէնը քրանցանատման սերէնի գոխակերպւելը։ Ծանոթ. քունական 15. Առանձնապէս Սպենսերъ, „Վցութեան ու սոցիոլոգիա,“ passim.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425882

18822



Գինն և 20 կոսի.